ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1150: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՄԱՐՏԻ 2019Թ.
№ 7 (497)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Ու որպեսզի թամաշավոր ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունից:

Հովհաննես Թումանյան



Ամենայն հայոց հոգեհայրը

Ես կարդում եմ նրան ու ասում.-Այս հմուտ, հանճարեղ լոռեցին
Հոմերի, Գյոթեի հետ մի օր՝ հավասար՝ նստել է քեֆի,
Եվ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք տվել ու առել,
Ինչպես իր պապերն են արել՝ իրար հետ խնջույքի նստելիս:

Եղիշե Չարենց

«Գրողը մնայուն, հավերժական գործեր պիտի տա՝ խիտ, խորը, ուժեղ…»:

Այս խորհրդածությունն իբրեւ պատգամ ու համոզմունք, անկասկած, հաճախ պիտի լսած լինեն այն բախտավորները, ում վիճակվել էր նրա ժամանակակիցն ու զրուցակիցը լինել: Թերեւս, սա մի հստակ բնաբան է, որ ամեն մի գրողի եթե ո՛չ սկզբնախնդիրը, ապա գոնե վերջնախնդիրը պիտի հանդիսանա: Իսկ Թումանյանի ստեղծագործական կյանքում դա մի անփոփոխ հայեցակետ էր, որը նրան մշտապես ուղեկցող միակ չափանիշը եղավ. թե՛ այն ժամանակ, երբ «Շունն ու կատուն» էր գրում, թե՛ այն ժամանակ, երբ իր վերջին քառյակի վերջին տողն էր ավարտում…

Որեւէ բանաստեղծի բանաստեղծական աշխարհի մասին խոսելիս, նրա ստեղծագործական ժառանգությունը քաղաքակրթության գոյության բազմադարյան ֆոնի վրա արժեւորելիս ներողամտության ինչ-որ մի փափկանկատ, թերեւս՝ գորովագին կեցվածք ենք պահպանում՝ հաշվի առնելով

էջ 2

Մասունքներ 150-ամյա առասպելից

Հայոց առասպելից ծնված դյուցազնական անհատը՝ Զորավար Անդրանիկը թեւակոխեց իր հավերժական ընթացքի 150-ամյակը:

Անդրանիկը հայոց պատմության ծնունդն է, հայոց ճակատագրի ահեղ հրամայականը:

Հարյուր հիսուն տարի է անցել նրա ծնունդից, եւ այսօր էլ ժողովուրդը՝ մեծով ու փոքրով զմայլելի սիրով կապված են նրա անվան ու մասունքների հետ, երգում են նրան ծոնված երգերը, պաշտում, ակնածում բացառիկ զգացումներով:

2015 թ. համայն հայությունը եւս մեկ անգամ համազգային ու համաժողովրդական չափանիշներով խնկարկեց ու ոգեշնչեց նրա անմարելի, անկորչելի հիշատակը:

Վերոնշյալ խնկարկման արդյունքում ծնվեցին գրական նոր գործեր, որոնց շարքում է վաստակաշատ գրող, հասարակական գործիչ Ռուբեն Սիմոնյանի «Մասունքներ» խորագրով գիրքը, որը «Նոյյան տապան հոլդինգ» հրատարակչության կողմից է հրատարակվել: Գրքի առաջաբանը գրել է գրականագետ, եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը: Այդ առաջաբանում գրականագետը բացառիկ նրբանկատությամբ գնահատում եւ իմաստավորում է Զորավար Անդրանիկին վերապահված տեղն ու դերը հայոց ազգային կյանքի հավաքական հոլովույթի մեջ: Վերջինս նշում է, որ ամենաջերմ գորովանքի են արժանի Ռ. Սիմոնյանի նման նվիրյալները, ովքեր մոռացությունից մեկիկ-մեկիկ փրկում են Զորավարի առասպելական կյանքի ուսանելի դրվագները:

Ըստ Կ. Վարդանյանի դիտարկման՝ այդ դրվագները սերունդների համար անգնահատելի դաստիարակչական արժեք ունեն, քանզի Անդրանիկը մեր այն բացառիկ Զորավարն էր, ով ապագա Հայաստանի համար ոչ միայն ժողովուրդ ու որբեր, այլեւ հենց ժողովրդի դիմագիծն էր փրկում:

Ռ. Սիմոնյանի հեղինակած այս նոր աշխատանքն աչքի է ընկնում թարմ շնչով ու ասելիքով՝ Անդրանիկի փառահեղ կերպարին նոր նրբագծեր ավելացնելու ազնվատենչ ճիգերով ու մղումներով:

Իսկ Անդրանիկ հայի, Անդրանիկ զորավարի ու անհատի կերպարը հայ հանրությանը ճշմարտացի եւ ամբողջական գույներով ներկայացնելը կարեւոր եւ շատ կարեւոր ու անհրաժեշտ գործ է, որին արդեն զգալի ժամանակով տրվել եւ նվիրվել է իջեւանցի գրող Ռ. Սիմոնյանը:

Հմուտ բանագետի պես գրողը շրջել է Հայաստանի տարբեր մարզերում եւ գրի առել Զորավարի կյանքին եւ գործունեությանը վերաբերող բացառիկ մասունքներ: Այդպիսի մի պատում՝ «Անդրանիկի քոռսիկը», վերաբերում է Վայոց Ձորի մարզի Ազատեկ գյուղին, որտեղ կարճ ժամանակով զորքով ու գաղթական ժողովրդով հանգրվան է գտել մեծանուն Զորավարը: Մինչեւ օրս Ազատեկ գյուղի կենտրոնում հատուկ ակնածանքով են գուրգուրում այն քռոսենին (վայրի տանձենի), որի շղարշի ներքո գիշերել է հայոց հերոսապետը: Ահա այսպես է հասարակ ժողովուրդը սիրով ու նվիրումով պահում, պահպանում այն ամենը, ինչը որ կապված է Անդրանիկի անվան ու հիշատակի հետ: Միայն թե հարկավոր է համաժողովրդական ջանքերով անդուլ ու աննահանջ պայքար մղել Անդրանիկի անունն ու փառքը գիտակցաբար ու նպատակադրված նսեմացնողների ու վարկաբեկողների դեմ (որ կուսակցությանը կամ որ

էջ 2

Արթուր Գրիգորյանն անդրադարձել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ստուգման արդյունքներին

Բնապահպանության եւ ընդերքի տեսչության մարմնի նախկին ղեկավար Արթուր Գրիգորյանն անդրադարձել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում անցկացված ստուգման արդյունքներին:

Հիշեցնենք, որ 2018 թ. սեպտեմբերի 10-ից մինչեւ 2019 թ. հունվարի 22-ը ստուգում է իրականացվել ընկերությունում: Ստուգումների վերջին օրը Գրիգորյանը հեռացվել է պաշտոնից:

- Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը հրապարակել էր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում 4.5 ամիս տեւած ստուգումների արդյունքները, որի ընթացքում եղել եք տեսչական խմբի ղեկավար, ստուգումների ամփոփման փուլում Ձեզ հեռացրել են զբաղեցրած պաշտոնից, հրապարակված ստուգման արդյունքներից պարզ դարձավ, թե ինչ խախտումներ ու թերություններ են արձանագրվել, վերջում նշված էր մի քանի պաշտոնյաների անուններ, որոնց 500 հազար դրամի չափով տուգանել են եւ ընկերությանը հանձնարարականներ են տվել, որ այդ խախտումները սահմանված ժամկետում վերացնեն: Ինչքանո՞վ են հրապարակվածի մեջ արտացոլված ստուգման արդյունքները, արդյո՞ք նույնաչափ են ընկերությանը տված պատիժները, թե՞ ավելի լուրջ քայլեր պիտի ձեռնարկի տեսչական մարմինը:

- Ես բովանդակային հարցերի չեմ անդրադառնա, որովհետեւ ամբողջական փաթեթը ձեռքիս տակ չէ, չգիտեմ այն, ինչ հրապարակվել է, դա ստուգման ամբողջական տվյալները ներառո՞ւմ է, թե՞ ոչ: Բայց հերթով կներկայացնեմ դրանց մասին: Նախ՝ եկեք մի քանի հստակեցումներ անենք, երեկ ստուգման արդյունքների հրապարակումից հետո սոցիալական ցանցերում, մամուլում հրապարակումներ եղան, որոնց կփորձեմ անդրադառնալ: Օրինակ, մոտեցումներ կար՝ ինչո՞ւ է ստուգման ժամանակաշրջանն ընդերքի մասով ընդգրկում միայն 2017 թվականը՝ հունվարի 1-ից մինչեւ 2018 թ. հունվարի 1-ը: Որովհետեւ, ի տարբերություն

էջ 6

Ամենայն հայոց հոգեհայրը

Տիգրան Գրիգորյան

էջ 1

ոչ միայն այն ժամանակաշրջանի յուրահատկությունները, որում ապրել ու իր երկերն է արարել բանաստեղծը, այլեւ տվյալ բանաստեղծի խառնվածքին հատուկ այս կամ այն բնորոշ ծայրահեղությունը: Բայց Թումանյանի բանաստեղծական աշխարհի հետ շփվելիս հաղորդակցվում ենք աշխարհընկալման մի այնպիսի համապարփակ պարզության հետ, մարդկային կյանքն օրորոցից մինչեւ խոր ծերություն ամփոփող, մի այնքա՜ն սիրառատ, ծնողական բարեհոգության ենք հանդիպում, որ ակամայից մոռանում ենք բոլոր ա՛յն պայմանական հանգամանքների գոյության մասին, որոնք շա՜տ ու շատ բանաստեղծների «խանգարում» են հավերժի մշտառկա ձայնափողը մնալ:

Բոլոր դեպքերում՝ ամեն մի իսկական բանաստեղծ հավերժի ճամփորդ է, սակայն հանուն արդարության հարկ է ասել, որ այսպիսի որակումը, թեեւ՝ նախանձելի, այնուամենայնիվ, Թումանյանի համար մի քիչ մեղմ է ասված: Նա ավելի ճիշտ՝ անհուսին տնօրինություն արեց ու հավիտենության մշտնջենական զրուցակիցը դարձավ...

Ժողովուրդների վաղնջական երթի մեջ բացառիկ են այն դեպքերը, երբ մի ամբողջ ազգի առավել հավաքական հուզաշխարհն ու կեցությունը, գեղագիտական աննախադեպ չափանիշներով եւ գեղարվեստական խոսքի բազմասեռ ու բազմաժանր դրսեւորումներով, բարբառի մի եզակի անհատի շուրթերով: Հայ գրականության մեջ այդ մշտարթուն տառապյալն ու աննկուն պայծառատեսը, մեր ազգային լինելիության այդ հոգեւոր կնքահայրը Հովհաննես Թումանյանը եղավ:

Այստեղ խոսքն ընդմիջելով, գուցե անհարկի, այնուամենայնիվ, չի կարելի չասել, որ Թումանյանի անվան անփոխարինելի զարդը հանդիսացող «ազգային» բառը երբեմն ծուռ հայելու մեջ են ուզում տեսնել, ինչպես՝ տարաշխարհիկին հակված, «գերզարգացած», մոդեռն թախծապաշտներ, այնպես էլ՝ իրենց ունեցած գրական մեծության արժեքը չգիտակցող, համաշխարհային գրականության ահռելիությունից շշկռված, անբուժելի հնազանդությամբ տառապող միամիտ մտավորականներ. էլ չենք խոսում այս պակասավոր մոտեցումներով առաջնորդվող գրականությամբ զբաղվողների մասին:

Այսպիսիններն, իհարկե, «առանց ուրանալու», տեղն ընկած տեղը՝ նույնիսկ թմբկահարելով Թումանյանի մեծությունը, այդուհանդերձ «ազգային» բառը Թումանյանի ստեղծագործական աշխարհին ասես իբրեւ զսպաշապիկ են փորձում հագցնել: Այսինքն՝ ասել է, թե համաշխարհային գրական հորիզոններում հաստատվելու համար անպայման պետք է գրել «Ռոմեո և Ջուլիետ», ոչ թե՝ «Անուշ», «Եվգենի Օնեգին», ոչ թե՝ «Գիքոր», Օմար Խայամի եւ ո՛չ թե՝ Թումանյանի քառյակները...

Կարելի է ի գիտություն թյուր ըմբռնումների՝ այսպիսի մի պարզ հայտարարություն անել. **«Համաշխարհային գրականությանն են պատկանում բոլոր ազգերի գրական այն կոթողները, որոնք, լինելով ազգային հոգեկերտվածքի ու մտածողության ինքնատիպությամբ երկնված կատարյալ գեղարվեստական գործեր, ի վիճակի են հուզելու աշխարհի ընթերցողին»**: Կարո՞ղ են արդյոք վերոհիշյալ մոլորված ընկալումներում թափառող հոգիներն ասել, թե Թումանյանի այդ ո՞ր ստեղծագործությունն է, որ մեր ազգային գրականության մեջ շողարձակելով, բայց վերը նշված (թող որ՝ մի քիչ կտրուկ ձեւակերպած) բնութագրական պայմանին չբավարարելու համար կարող է զրկվել համաշխարհային գրականության անցաթուղթ ունենալու արտոնությունից: Պարզապես ապշեցուցիչ է, թե որքան անհեթեթ հոգի պետք է ունենալ, որպեսզի մի բանաստեղծի ազգային մեծագույն բանաստեղծ համարելով հանդերձ՝ փորձել վերապահումներ անել նրա ստեղծագործությունները որպես համամարդկային հոգեւոր հարստություն արժեւորելու խնդրում:

Թումանյանն անհատակ է ու անեզր... Նրա թողած խորունկ ազգային եւ անչափ մարդկային գրական ժառանգությունը մեր հինավուրց ժողովրդի փա՜ռքն ու պարծանքն է, իսկ համաշխարհային գրականության համար անսպա՜ռ մարդկայնության խորհրդանիշը պիտի որ լինի...

Խորհելով այդ անքննելի հայի կյանքի ու գործունեության շուրջ՝ մարդկային երեւակայությունը սպառում է իրեն, թե այդ, արդարեւ, կախարդական մարդը որտեղի՞ց է ժամանակ գտել հասցնել այդ ամենը. հասարակական կյանքի բազում ոլորտներում լրջորեն ներգրավված լինել, բայց եւ մանուկների համար ոտանավորներ հորինել. բազմաթիվ հեքիաթասացների ունկնդրել ու ժողովրդի մեջ շրջող նմանատիպ հեքիաթների ուշագրավ տարբերակներն առանց հոգնության գրի առնել. հոգու ամբողջ նողկանքով իրենց քննադատ երեւակայող «ոչ գրական ոչնչություններին» դատափետել, հետո կարողանալ նորից ներանձնանալ ու շարունակել գլուխգործոցներ երկնել...

Նա չի ունեցել կանոնավոր կրթության որեւէ պատկառելի փաստաթուղթ, բայց միայն նախանձել կարելի էր համաշխարհային գրականության նրա խոր իմացությանը. այդ գրականության հսկաներին տված աֆորիստիկ բնութագրությունների անվիճարկելիությանը. մեծն ու փոքրը, ճիշտն ու կեղծը, անցողիկն ու հավերժականը միմյանցից զանազանելու նրա անվրեպ հանճարեղությանը...

Հիանում ու զարմանում ես, թե իր ապրած խառնակ ժամանակներում, որպես հրապարակախոս, որքան ողջամիտ հստակությամբ է լուսաբանել մեր ազգի առջեւ ծառացած խնդիրները. ինչ գթասրտությամբ է Մեծ եղեռնից մազապուրծ, որբացած մանուկների խնամակալության հարցերին նվիրվել ու որպիսի սրտացավ խիզախությամբ է, անտերության մատնված ազգամիջյան թշնամական ընդհարումների մոլուցքը կանխելու համար, սպիտակ դրոշն առած սարեսար ընկել. ինչպիսի ջերմ անմիջականությամբ է արձագանքել իր մարդկային միջնորդությանն ապավինած ամեն մի հուսալքված սրտի՝ միաժամանակ հասցրել զանազան ընկերությունների ղեկավարը լինել:

Այսքանից հետո եղել է մի բազմազավակ ընտանիքի սրբազան հայր, պարտքերի տակ կքած, բայց «լեն ու բոլ» ապրելակերպից, հյուրերից ու խնջույքներից համառորեն չհրաժարվող, անտնտես ու շռայլ, մի «պատուհաս» ամուսին. ժողովրդական հանդիսությունների պատվելի զարդն է եղել ու երջանկառիթ արարողություններին՝ անհաղթելի սեղանապետ: Վերջապես նա՛ էր հայ իրականության մեջ երբեւէ եղած, երեւի թե ամենաառողջ գրական միավորման՝ «Վերնատան» տանտերը, որտեղ հավաքվում էին ժամանակի հասարակական-մշակութային կյանքի այնպիսի կարկառուն անհատականություններ, որոնց անունների թռուցիկ հիշատակությունը նույնիսկ բավական է, որպեսզի ամենաանգետ հայի հոգին անգամ պատկառանքով լցվի (Աղայան, Դեմիրճյան, Պռոշյան, Աղբալյան, Իսահակյան, Շիրվանզադե, Լեո, Շանթ, Մուրացան, Մանանդյան...):Ասում են, թե Թումանյանն իր հանճարը տվեց ժողովրդին, տաղանդը՝ գրականությանը: Այս արտահայտության ողբերգական ենթատեքստն այն է, որ իր բազմաչարչար ժողովրդի ցավով շուլալված այդ ամենամարդ հայը երբեք ժամանակ չունեցավ լիաշունչ ապրելու միայն գրականությամբ: Նա չավարտեց իր «Հազարան բլբուլը»... Բայց հայ ժողովուրդը, ի դեմս նրա, (ի տես աշխարհի) ունեցավ իր Հազարան բլբուլը...

Թումանյանի հիրավի առասպելական հոգին ամփոփել էր համբերության խորհրդին ունկնդիր արեւելքն ու արդարության երդումին հավատարմագրված արեւմուտքը: Նրա խառնվածքում հյուսիսցու խստաշունչ պարզասրտությունը կար ու հարավցու սրտոտ խելահեղությունը: Իսկ եթե ավելի ստույգ, ապա պիտի ասենք՝ նա իր բիբլիական ժողովրդի հրեղեն ողջախոհությամբ օծված մի վճիտ հայ էր, որի մեջ Արարիչն ամբարել էր ա՛յն ամենայն առաքինին ու լուսավորը, որով հայ հանճարը մաքառելով փառավորել է իր անկրկնելի պատմությունը...

Թող աշխարհին խաղաղությու՛ն լինի, իսկ մեր բազմատանջ հողագնդին՝ հավերժություն, որպեսզի սերունդները դար ու դարեր «օրհնե՛ն էն սհաթը», երբ «Հայաստանի արգանդը եղավ սրբորեն բեղուն», եւ Հայո՛ց Աշխարհը ինքն իրեն երկնեց Լոռվա Դսեղում...

Փետրվար 1989թ.,
Ք.Գորիս

Մասունքներ 150-ամյա առասպելից

էջ 1

միջավայրին էլ պատկանելիս լինեն):

Ռ. Սիմոնյանի հեղինակած սույն աշխատությունն ուղղված է հենց պատմության կեղծարարների դեմ՝ հայ եւ օտարազգի, ովքեր տարբեր նպատակներով եւ տարբեր տեսանկյուններից խեղաթյուրում են պատմական եղելությունները, փորձում հնարավորինս վարկաբեկել Անդրանիկի կյանքի եւ գործի պատմությունը:

Ռ. Սիմոնյանի սույն գործի արժեքն ու խորհուրդն այն է, որ նա Զորավարին վերաբերող յուրաքանչյուր դեպք եւ դետալ ընդունում է որպես սրբազան մասունք՝ հայոց սերունդների հիշողությանն առհավետ փոխանցելու արժան: Առանց հապաղելու եւ վարանելու գրողն ասում, վավերացնում է այն պատմական ճշմարտությունը, որ 1918 թ. Զորավարի սկսած եւ ութ ամիս շարունակված մեծ ու աննահանջ ռազմարշավի շնորհիվ Սյունիքի ժողովուրդն այդ անորոշ ու անհուսալի օրերում փրկվել է դեպի Թուրան արշավող թուրքերի անխուսափելի կոտորածից եւ երկրամասը պահպանվել է Հայաստանի կազմում: Դրանով իսկ Զորավարն ու իր զորքը վերախմբագրել են 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված հանրահայտ խայտառակ պայմանագիրը. թշնամուն թողնված հայկական կարեւոր այդ նահանգը պահվել է ազատ եւ անկախ՝ որպես հայոց երկրի անբաժանելի մաս:

Ահա այսպես Սյունիքը սեպ դարձավ ու խրվեց թուրքերի սիրտը: Նրա վերջնամասով հայոց երկիրը սահման ունեցավ իր հին հարեւանի՝ Իրանի հետ:

Արմեն Կարապետյան, պատմաբան, հրապարակագիր



Ռուբեն Սիմոնյան

Աշխատության հեղինակն ափսոսանքով հավելում է, որ Սյունիքի կարգավիճակը 1918թ. աշնանից կարող էր ունենալ նաեւ Արցախ աշխարհը, եթե Անդրանիկի՝ դեպի Արցախ ձեռնարկված ռազմարշավին չխանգարեին առաջին անգամ յուրայինները, երկրորդ անգամ՝ անգլիացիները:

Եվ ճշմարտացի է այն եզրահանգումը, որ սյունիքյան հանգուցալուծումը պետք է համարել հողահավաքի սկիզբը: Ուրեմն, հայոց հողահավաքի սկիզբը Սյունիքում եւ Սյունիքով դրել է մեծն Անդրանիկը: Ավելին, նա ամենուր շարունակել է իր զինակիցների՝ Մուրադի, Կայծակ Առաքելի սկսած որբահավաքը:

Ռ. Սիմոնյանի ազնիվ գրիչը եւս մեկ անգամ արձանագրում ու վավերացնում է, որ Անդրանիկը ժողովրդի ծոցից սերված հերոս է, եւ ժողովուրդն է նրա անունը միշտ պահել, պահպանել եւ անմահացրել:

Եվ միմիայն ժողովուրդն է նրա հավերժական փառքի ու պատվի տերը: Հենց այս ոգով ու ոճով է շնչում սույն աշխատությունը՝ առաջին իսկ էջից մինչեւ վերջինը:

Հեղինակն անդրանիկյան հուշեր եւ մասունքներ է որոնել Հայաստանով մեկ:

Եվ գտել է կերպարներ, որոնք նորություն ու թարմություն են հայկական Անդրանիկապատումի էջերում:

Տարիներով եւ տասնամյակներով ազնիվ ու ազգաշահ այս գործին լծված Ռ. Սիմոնյանը սույն աշխատությամբ վերստին փաստում է, որ ինքը մեր ժամանակի լավագույն անդրանիկագետներից է եւ անչափ սիրո ու ակնածանքի պաշարներով է գոտեւորված հայ զորավարի փառքի, պատվի եւ հիշատակի հանդեպ:

Արմեն Կարապետյան, պատմաբան, հրապարակագիր

Մարզպետի հյուրերը «Իրազեկ դպրոցականներն» էին

Անցած շաբաթավերջին Սյունիքի մարզպետի հյուրերն էին «Կապանի մանկապատանեական ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի «Իրազեկ դպրոցական» խմբակի սաները:

Քանի որ այս պահին նրանք պետական կառավարման համակարգն են ուսումնասիրում, իրենց խմբավար Ռամելա Հակոբյանի հետ այցելել էին Սյունիքի մարզպետարան՝ շրջել կառույցում ու ծանոթացել նրա աշխատանքներին:

Պատանիներին սիրով հյուրընկալեց նաեւ մարզի ղեկավարը: Հունան Պողոսյանը հարցեր ուղղեց խմբակի սաներին եւ զրուցեց իրենց ունեցած նախասիրությունների, հետաքրքրությունների, կրթության հանդեպ վերաբերմունքի ու մասնագիտական կողմնորոշման մասին:

«Իրազեկ դպրոցական» խմբակը կենտրոնում գործում է 2012-ից, այժմ 3 խումբ ունեն, որից յուրաքանչյուրում համայնքի տարբեր դպրոցներից աշակերտներ են ընդգրկված:

syunik.mtad.am

Բացահայտվել են Մեղրիում կապարած կասկածելի գործարքները

ՀՀ նոր իշխանությունները պարզել են Մեղրիի ազատ տնտեսական գոտու տարածքում իրենց նախորդների կատարած կասկածելի գործարքները: Այս մասին հրավիրած ասուլիսում լրագրողներին հայտնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նա պատմեց, որ երբ այցելել է Մեղրիի ազատ տնտեսական գոտի, պարզել է, որ տարածքը հող չունի: Այդ տարածքի հողերը կասկածելի գներով սեփականաշնորհվել են հենց այն ժամանակ, երբ կառավարությունն արդեն իմացել է ազատ տնտեսական գոտի ստեղծելու ծրագրի մասին:

«Մենք առաջարկեցինք՝ բերեք սուս ու փուս ինքներդ հետ վերադարձրեք: Խնդրեցինք քաղաքավարի, նրանք մերժեցին: Մենք ասացինք՝ շատ լավ, ավելի մանրամասն կծանոթանանք: Ավելի մանրամասն ծանոթացանք ու հիմա քրեական գործ է հարուցվել »,– ասաց Փաշինյանը:

armeniasputnik.am

Մեղրիի մաքսակետի վերանորոգման աշխատանքներն ավարտվել են

Պետական եկամուտների կոմիտեն, մինչեւ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետի արդիականացման աշխատանքների մեկնարկը, նախաձեռնել է մաքսակետի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որոնք կոչված են ապահովելու կառույցի բնականոն գործունեությունը:

Մեղրիի մաքսային կետում վերանորոգման աշխատանքներն արդեն ավարտվել են: Արդյունքում բարելավվել են շենքային պայմանները, կատարվել են ներքին եւ արտաքին հարդարման աշխատանքներ, վերանորոգվել է սահհանգույցը: Բարեկարգվել է նաեւ մաքսակետի ամբողջ տարածքը, ամբողջությամբ փոխվել է արտաքին լուսավորության համակարգը, շենքից դուրս կառուցվել է նոր սահհանգույց, թարմացվել են աղբամաններ եւ այլն:

«Մեղրիի մաքսակետը գործում է շուրջօրյա ռեժիմով: Ստեղծված են բոլոր պայմանները՝ սահմանահատումն որակյալ կազմակերպելու համար: Մաքսակետն ամեն օր սպասարկում է մոտ 1300 ուղեւորի եւ 200-ից ավելի բեռնատար ավտոմեքենա»,- տեղեկացրել է Մեղրիի մաքսային կետ-բաժնի պետ Վլադիմիր Աբունցը:

Հայ-իրանական սահմանին աճել է բեռնափոխադրումների ծավալը: Իրանից հիմնականում ներմուծվում են շինարարական ապրանքներ: Հատկապես վերջին շրջանում զգալի ավելացել է նաեւ Մեղրիի մաքսակետից օգտվող տնտեսվարող սուբյեկտների թիվը:

Վերանորոգման արդյունքում հարավային դարպասում առավել հարմարավետ եւ հավասար պայմաններ են ստեղծվել հայ-իրանական սահմանը հատողների համար:

Քաջարանի կոմբինատի մեկօրյա ֆինանսական սպուգման ոդիսականը

Պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) դեռ պարզում է, թե ինչ ճանապարհով եւ ինչպես է **168.am**-ին հաջողվել «գաղտնազերծել» Պղնձամոլիբդենային կոմբինատում 2018թ. դեկտեմբերին ՊԵԿ-ի աշխատակցի կողմից իրականացված **հարկային ստուգումների մասին տեղեկատվությունը,** որը տեւել էր ընդամենը մեկ օր, ընդ որում՝ **ՊԵԿ-ը՝ միայն մեկ աշխատակցով, փաստորեն, ի վիճակի է** եղել մի ամբողջ գիգանտ հանքարդյունաբերական ընկերություն ստուգման ենթարկել եւ ռեկորդային արագությամբ **ավարտել աշխատանքները միայն 1 օրում:**

Այսպես՝ 2018թ. դեկտեմբերի 25-ին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի համար ստուգման հանձնարարագիր է տրվել, որն ավարտվել է նույն օրը՝ դեկտեմբերի 25-ին, այն դեպքում, երբ այդպիսի խոշոր հարկատուին ստուգելու համար սովորաբար ամիսներ են հարկավոր լինում: Ստուգման ակտի տեսակը՝ ԲՍ (բյուջեի ստուգում): Նախորդ այդօրինակ ստուգման ամսաթիվը եղել է 05.12.2017թ.: Մեր հրապարակման մեջ նշվում էր նաեւ, որ Հայաստանի ամենախոշոր հարկատուներից մեկի ստուգումն իրականացրել է ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանի մերձավոր բարեկամը, ընդ որում՝ միայնակ, ու սա անհերքելի է, որ հանցավոր տարրեր կպարունակի իր մեջ:

Հաջորդ ուշագրավ դրվագն այն է, թե ինչ քայլերի է դիմել «ռեկորդային արագությամբ» աշխատող ՊԵԿ պաշտոնյան, երբ փորձել է կոմբինատում իբր հայտնաբերած 4.646.216.885 դրամի խախտումները լեգալացնել փաստաթղթերով: Ակտը բյուջե է մուտքագրվել դեկտեմբերի 29-ին՝ շաբաթ օրը, ոչ աշխատանքային օրով. իսկ բյուջետային տարին փաստացի ավարտված էր այդ շրջանում: Ակտի մուտքագրման ժամը ֆիքսվել է ժամը 15:45-ին: Ընդ որում՝ օպերատորը, այսինքն՝ տվյալներ մուտքագրողը, Դավիթ Անանյան անուն-ազգանունով ՊԵԿ աշխատակիցն է եղել:

Այսինքն՝ անձամբ ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանը: Մի տարօրինակ գործողություն եւս. իբրեւ թե այնպիսի խախտում են հայտնաբերել, որից, սակայն, չի առանձնացվել արտաբյուջե մուտքագրվող 10%-ը: Ու սա արվել է այն նպատակով, որ, եթե այդ 10%-ը՝ 460 000 000-ը, տանեին արտաբյուջե, որը տարվա վերջին անպայման զրոյացվում է, հունվարին այն չէր կարող վերադարձվել միասնական հաշվին:

Տեղեկատվությունը **168.am**-ը լրիվ հիմնավորված փաստաթղթերով հրապարակել էր՝ ցույց տալու, թե ինչ կեղծիքների է դիմել ՊԵԿ-ը, միայն թե ապացուցի, որ հետհեղափոխական Հայաստանում ՊԵԿ-ի թերակատարումն աննշան տոկոս է կազմել՝ հատկապես ներկայիս ղեկավարի օրոք: Պետբյուջեի տարեկան եկամուտների պլանային ցուցանիշն ապահովելու համար հնարավոր եղանակներից՝ ճշգրտված հաշվետվություն, ստուգման ակտի առկայություն եւ այլն, ՊԵԿ-ն ընտրել է ստուգման այս ակտի տարբերակը, բայց դրանք այլեւս գոյություն չունեցող, անիրական ստուգման ակտեր են, որոնք կազմվել են օրենքի խախտումով եւ ունեցել են հստակ գծած նպատակ:

Ի դեպ, հրապարակված օրինակը բյուջեի իրական թերակատարումը քողարկելու հիմքերից մեկն էր իրականում, որը, որպես այդ կեղծիքի մեխանիզմ, ներկայացված էր ամբողջական ծավալով:

Նկատենք, որ ՊԵԿ-ը ոչ թե հերքել էր մեր հրապարակումը, այլ՝ քննություն էր սկսել՝ զուտ համակարգի ներսում ինֆորմացիայի արտահոսքի կապերը բացահայտելու նպատակով:

ՊԵԿ-ի նախագահի տեղակալ **Ռուստամ Բադասյանի** հրավիրած ասուլիսին հնչեցրած մեր հարցին, **թե ի՞նչ գործողություններ են հետեւել ՊԵԿ-ում՝ այս հրապարակման հետքերով, լակոնիկ պատասխան հնչեց.**

– Ձեր նշած ռեկորդային ստուգումների դեպքի առնչությամբ ՊԵԿ նախագահը պարզաբանել է, եւ քանի որ այսօրվա ասուլիսի թեմային դա չի առնչվում՝ կխնդրեմ բավարարվել միայն ՊԵԿ-ի տարածած պաշտոնական պատասխանով, ես ավելացնելու ոչինչ չունեմ:

2018-ի հարկային եկամուտների թերակատարման մասով ասեմ, որ Հարկային նոր օրենսգրքի կիրառումից հետո բազմաթիվ փոփոխություններ է կրել հարկահավաքման գործընթացը, եւ նշված հրապարակման մեջ հաշվի չեն առնվել նոր մեխանիզմների ներդրմամբ պայմանավորված փոփոխությունները: Իսկ նյութի բովանդակային եզրահանգման հետ ես հենց այդ պատճառով էլ ընդհանրապես համաձայն չեմ:

– Ամեն դեպքում, ներսում պարզե՞լ եք, թե ինչպես է հաջողվել այդ աշխատակցին միայնակ եւ մեկ օրում հանքարդյունաբերողի մոտ ստուգայցն ավարտել:

– Ներքին անվտանգության վարչությունում քննությունը դեռեւս ընթանում է՝ պարզելու հրապարակման հիմքերը, արդյունքների դեպքում կհրապարակենք ողջ տեղեկատվությունը:

– Արդյո՞ք մեկ աշխատակցով մի ամբողջ ընկերությունում իրականացրած մեկօրյա ստուգումների տակ հանցավոր տարրեր չեն թաքնված՝ մանավանդ, եթե հաշվի առնենք ստուգում իրականացնող անձի հետ ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանի ազգակցական կապերի հանգամանքը: Ի՞նչ պատիժ է նախատեսում օրենքը նման դեպքերում:

– Իրավակարգավորումներով շատ տարբեր պատիժներ են նախատեսվում նման դեպքերում, բայց ընդունեք մի փաստ՝ մենք խոսում ենք գոյություն չունեցող բանի մասին, եւ դա որպես հաստատված փաստ ներկայացնելու հիման վրա դուք ձեւակերպում եք Ձեր հարցը: Գոյություն չունեցող բանի մասին չեմ ուզում խոսել եւ հետեւություններ անել դրանից:

– Այսինքն Ձեզ արդեն հայտնի՞ են քննության արդյունքները, Դուք այնքան վստահ եք պնդում, որ գոյություն չունեցող բանի մասին է իմ հարցը, պարոն Բադասյան: Դուք վստահաբար պնդում եք, որ չկա՞ նման բան:

– Քննությունը տարվում է այն ուղղությամբ, որպեսզի պարզվի, թե ո՞վ է ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվության արտահոսքն արել, հանրայնացրել:

– Իսկ որ մեկօրյա ակտով սկսվել եւ ավարտվել են պղնձամոլիբդենային կոմբինատի հարկային ստուգումները, սա ՊԵԿ-ի համար արդեն հայտնի փաստ է, այո՞:

– Մեկ օրում ստուգում սկսել եւ ավարտել ուղղակի անհնարին է, մենք պաշտոնապես բազմիցս անդրադարձել ենք 168.am-ի այդ հրապարակմանը: Ընդհանուր գործընթացից մեկ դրվագ հանվել է, ու դա ծառայել է մի ամբողջ հրապարակման հիմք, եւ ինֆորմացիայի դրվագի արտահոսքն արվել է ծառայողական գաղտնիքի պահպանման կոպտագույն խախտումով: Իսկ դրա հիման վրա հրապարակումը չեմ կարող համարել հաստատված տեղեկատվություն: Իմ ներկայացրած հարկային վարչարարության բարեփոխումները չեն առնչվում ձեր հրապարակման նյութին, ուստի կոչ եմ անում բավարարվել պարոն Անանյանի տված

էջ 7

«Սյունյաց երկիր» թերթի՝ Մորուս Հասրաթյանին նվիրված բացառիկ համարի շնորհանդեսը Երեւանում

«Սյունյաց երկրի» թողարկած բացառիկ համարների թիվը հասնում է մոտ երկու տասնյակի՝ նվիրված հայ ազգի մեծերին, Սյունիքի ոստաններին: Եվ նման հատուկ թողարկումների շնորհանդեսներ են եղել Կապանում, Գորիսում, Սիսիանում: Այս անգամ՝ Երեւանում:

Մարտի 22-ին Երեւանի «Օպերա Սուիթ» հյուրանոցում տեղի ունեցավ «Սյունյաց երկիր» թերթի՝ Մորուս Հասրաթյանին նվիրված հատուկ համարի շնորհանդեսը:

Միջոցառմանը մասնակցում էին գրականագետներ, պատմաբաններ, մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ, լրագրողներ, Աժ ներկա եւ նախկին պատգամավորներ, Մորուս Հասրաթյանի հարազատները, նախկին ուսանողները:

Խորհուրդ կա նրանում, որ շնորհանդեսը սկսվեց ժողգործիքների «Երգանի» քառյակի ելույթով, որ հնչեցրեց սայաքնովայական մեղեդիներ՝ կարծես հավաստելով ճշմարտությունը, որ Մորուս Հասրաթյանն անուրանալի ավանդ ունի սայաքնովագիտության մեջ:

Առաջինը ելույթ ունենալու պատիվը տրվեց Մորուս Հասրաթյանի կրտսեր որդուն՝ ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, դոկտոր-պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանին: Շնորհակալություն հայտնելով «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությանը՝ բացառիկ համար լույս ընծայելու եւ հովանավորին՝ բավականին շքեղ ու ծախսատար հրատարակության տպագրությանը նպաստելու համար, բանախոսը նշեց, որ սա Մորուս Հասրաթյանին նվիրված «Սյունյաց երկրի» երկրորդ հրատարակությունն է. երեք տարի առաջ տպագրվեց մի բացառիկ համար, որը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ տպագրվել է առանձին գրքով՝ **«Մորուս Հասրաթյան. նշանավոր սյունեցին, ականավոր պատմաբանն ու բանասերը»** խորագրով: Նաեւ հավելեց, որ ներկա հրատարակությունը նախորդից տարբերվում է նրանով, որ ներկայացված են Հասրաթյան տոհմի մյուս ներկայացուցիչները, ովքեր ավանդ են ունեցել հանրապետության մշակութային, սոցիալ-տնտեսական կյանքում, նախեւառաջ՝ Երեւանի քաղաքապետ Գրիգոր Հասրաթյանը, ում պաշտոնավարման օրոք Երեւանն աննախադեպ ծաղկում ապրեց, ինչպես նաեւ համարում զետեղված են Հասրաթյան տոհմի շառավիղները:

Տեսաերիզի միջոցով ներկայացվեց Մորուս Հասրաթյան հայագետի, գիտնականի, նվիրյալ մարդու կյանքի առանցքային դրվագները, պատմվեցին հուշեր:

ՀՀ ժողովրդական արտիստ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Թովմաս Պողոսյան. **«Մորուս Հասրաթյանը հայ ժողովրդի ամենամեծ երախտավորներից է, հայագիտության մեջ նշանավոր դեմք, ինձ առավել գերել են Սայաթ-Նովայից նրա կատարած թարգմանությունները: Ուշադրություն դարձրեք ամեն բառին ու խաղերի կառուցվածքին, հատիկ-հատիկ, ամեն մեկն ընտրված է անթերի լեզվով: Այդքան հարազատ, այդքան ճշմարտացի Սայաթ-Նովային տիրապետող մեկին չգիտեմ: Շատ լավ է թարգմանել, աննման: Կասկած երբեք չեն հարուցում, որ դա Սայաթ-Նովան չի գրել»**: Թ. Պողոսյանի այս խոսքը հնչեց էկրանից:

Ելույթ ունեցավ Մորուս Հասրաթյանի ուսանողը՝ լրագրող Յուրի Սահակյանը, ով «քայլող հանրագիտարան» Մորուս Հասրաթյանի մասին իր հեղինակած հուշերի գիրքն անվանել է՝ «Մորուս Հասրաթյան. թանկագին քարը»: Յու. Սահակյանը նշեց, որ գիտնականի հետ յուրաքանչյուր հանդիպում մի յուրօրինակ աշխարհ էր, գեղեցիկի, մարդկայինի, հավերժականի հետ շփվելու մի առիթ, որ մարդու կյանքում անմոռաց է մնում: Երբ հայրենի Սիսիան էր այցելում, ժողովուրդն օղակում էր նրան, եւ գիտնականը սիրով էր պատասխանում յուրաքանչյուրի հարցին, հետաքրքրվում ամեն մեկի որպիսությամբ: **«Մորուս Հասրաթյանն իր ողջ էությամբ ժողովրդի հետ էր, հուշերիս գրքի մեջ այդ միտքն ընդգծել եմ, դեմ էր, երբ մարդուն գնահատում են կոչումով կամ զբաղեցրած դիրքով»** -այսպես եզրափակեց իր խոսքը Յու. Սահակյանը:

Բանասիրական գիտությունների դոկտոր, սայաքնովագետ

Մերի Մելիքյան, «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամի գործադիր տնօրեն

Հենրիկ Բախչինյանը հուշեր ներկայացրեց. **«Մի անգամ եմ հանդիպել Մորուս Հասրաթյանին, 1975 թվականին: Դա պատմական օր էր: «Սովետական Հայաստան» թերթում հրապարակվել էր իմ հոդվածը: Կարդալով այն՝ իր մոտ հրավիրեց երիտասարդիս, ասելով՝ մի քանի խոսք ունեմ հաղորդելու: Մեկ անգամ եմ հանդիպել ընդամենը Հասրաթյանին, նրան համարում եմ մեկ օրվա ուսուցիչս, բայց նրա տված մեկ օրվա դասն ինձ համար տեւում է ահա մինչեւ հիմա՝ քառասուն եւ ավելի տարի: Հասրաթյանն ասաց, որ եթե ուզում եմ զբաղվել գիտությամբ, առավել եւս սայաքնովագիտությամբ, ապա պիտի զինվեմ խորագիտակությամբ, սովորեմ լեզուներ, խորանամ բանասիրության մեջ: Շատ լավ է, ասաց, որ թիֆլիսեցի ես, վրացերեն գիտես, բայց պիտի նաեւ արեւելյան լեզուներով հետաքրքրվես, պիտի անպատճառ Սայաթ-Նովայի ձեռագրերով զբաղվես: Հիշեց իր ժամանակի մի քանի դիլետանտների, որոնք, իր ասելով, գրչի մի հարվածով, թեթեւ ձեռքով ցանկանում են**

Մուրադ Մորուսի Հասրաթյան

«Երգանի» համույթը

գյուտեր անել եւ ոչ միայն սայաքնովագիտության, այլեւ ընդհանրապես գիտության մեջ ոչինչ չեն բերում, ավելին՝ խանգարում եւ խոչընդոտում է սայաքնովագիտությանը, ինչպես խանգարել եւ խանգարում են հենց իրեն՝ Մորուս Հասրաթյանին:

Ինքը փառահեղ մարդ էր, պատկառելի անձնավորություն, իրեն ոչ թե խրատատուի, խորհրդատուի դեր էր վերապահում, այլ այդ ամենն այնքան հիմնավոր ասաց, գիտնականին վայել լրջությամբ, որ տասնամյակներով դաջվել է հիշողությանս մեջ եւ աշխատում եմ մինչեւ հիմա կատարել վաստակաշատ գիտնականի պատգամը: Իմ Մորուս՝ շատ-շատ շնորհակալություն հոգածությանդ համար»:

Միջոցառմանն անդրադարձ եղավ Մորուս Հասրաթյանի վիճահարույց հոդվածներին: Որոշ մասնագետներ Վարդան Մամիկոնյանի գերեզմանը փնտրել են Ավարայրի դաշտում, ոմանք Նախիջեւանի Աստապատ գյուղի մոտ՝ Կարմիր վանքին կից սրբավայրում, ոմանք՝ Արագածի լանջերին: Մորուս Հասրաթյանը պնդում էր, որ սպարապետ Մամիկոնյանի աճյունն Անգեղակոթ գյուղում է՝ Նախիջեւան տանող խճուղու եզրին: Ըստ նրա՝ գոնե տեսականորեն Անգեղակոթի Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցում թաղված պիտի լինի սպարապետի դին, ուր հողին են հանձնել Ավարայրից նահանջող հայոց զորքերը: Մորուս Հասրաթյանը պնդում էր, որ իր սկսած պեղումները շարունակել է պետք, ամենածանր գործն ինքն արել է:

Ելույթ ունենալով՝ հնագետ Տիգրան Ալեքսանյանը փոխանցեց ներկաներին, որ պեղումներ են արել Մորուս Հասրաթյանի նշած վայրում, հայտնաբերվել են վաղ միջնադարում բավականին տարածված թաղումներ, մասունքներն ուղարկվել են Եվրոպա՝ փորձաքննության, որից հետո կտրվեն մի քանի հարցերի պատասխաններ:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանն իր խոսքը սկսեց շնորհակալությամբ ու երախտագիտությամբ, որոնք նախեւառաջ ուղղված էին համարի հովանավոր Միքայել Մինասյանին եւ հաջողություններ մաղթեց նրան: Բանախոսն անդրադարձավ Մորուս Հասրաթյան գիտնականին հատուկ համար նվիրելու պատմությանը:

Երախտագիտության խոսք ասաց Մորուս Հասրաթյանի «հոգեզավակը»՝ նրա ուսանողը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր Աելիտա Դոլուխանյանը. **«Շատ երջանիկ եմ, որ եղել եմ Մորուս Հասրաթյանի ուսանողը, բայց իմ շփումը նրա հետ չի ավարտվել միայն ուսանողության շրջանում, այլ ասպիրանտական տարիներին, եւ երբ արդեն գիտությունների թեկնածու էի, նրան հաճախ այցելել եմ, երբ աշխատում էր պատմության թանգարանում: Խորապես գնահատելով Հենրիկ Բախչինյանի ելույթը, ուզում եմ ասել, որ Մորուս Հասրաթյանը շատ մեծ գործ է կատարել Սայաթ-Նովայի ժառանգության ուսումնասիրման համար, որ նրա անունը միջազգային հնչեղություն ունի: 1999 թվականին Օքսֆորդում լույս է տեսել մի ստվար հատոր «Սայաթ-Նովա՝ 18-րդ դարի տրուբադուր», եւ այդ գրքում 70 անգամ հղում կա Մորուս Հասրաթյանին: Պետք է ասել, որ Չարլզ Դաուսեթը, ով հիանալի գիտի վրացերեն, թուրքերեն, պարսկերեն, Օքսֆորդի նշանավոր պրոֆեսորներից է, շատ հարցերում ուղղակի շարունակում է Մորուս Հասրաթյանին: Ինձ թվում է՝ դրանից մեծ գնահատական չկա: Ուզում եմ մի դրվագ ներկայացնել Գրիգոր Հասրաթյանին առնչվող. 1963 թվականին, երբ ուսանող էի, բացվեց Սայաթ-Նովայի հուշարձանը, մայրաքաղաքի ուսանողության անունից ես եմ ասել գնահատանքի խոսքը, բայց դա չէ էականը: Իմ կողքին կանգնած էին 20-րդ դարի ամենանշանավոր նկարիչներ, գրողներ՝ Ռոքուել Քենտը. Ստեյնբեքը եւ շատ ուրիշներ: Ես կուզենայի, որ չմոռանանք Երեւան քաղաքի այդպիսի ղեկավարին, որպիսին էր Գրիգոր Հասրաթյանը:**

Եվ երրորդը, որ կուզեի նշել, այն է, որ իմ խորին համոզմամբ՝ Մորուս Հասրաթյանի վրա ամենամեծ ազդեղությունը թողել են մեծագույն հայագետներ Նիկողայոս Մառը եւ Հովսեփ Օրբելին, որովհետեւ նա մի մարդ էր, ով իր վարքագծով շատ նման էր նրանց: Մի անհատականություն էր, որի գործի եւ խոսքի մեջ ոչ մի հակասություն չկար: Ես ուրախ եմ, որ այդ մեծ հայրենասերի, միջազգային առումով մեծության աշակերտն եմ եղել»:

Շնորհանդեսը եզրափակվեց «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամի գործադիր տնօրեն Մերի Մելիքյանի խոսքով, ով երախտագիտություն հայտնեց «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմին, խմբագիր Սամվել Ալեքսանյանին՝ բացառիկ թողարկման համար եւ հայտնեց, որ հիմնադրամն առաջիկայում եւս հանդես կգա նոր նախաձեռնություններով:

Շնորհանդեսից հետո տակավին միջոցառման մասնակիցները չշտապեցին բաժանվել իրարից. շարունակում էին հուշեր պատմել, շփվել նրա հարազատների հետ, նաեւ նրանց հետ լուսանկարվում էին՝ հավերժացնելով հիշարժան օրը: Մորուս Հասրաթյանի ավագ որդու՝ Բակուրի դուստր Նունե Հասրաթյանն ընտրել է պապիկի մասնագիտությունը. ավարտել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Տպավորված է «Սյունյաց երկրի» հրատարակած համարով, նրանում զետեղված նյութերի բազմազանությամբ: Պապիկին հիշում է որպես մարդասեր, շրջապատի նկատմամբ ուշադիր մարդ, ով անսահման սիրում էր Սյունիքը: Քանի որ Մորուս Հասրաթյանը շփվել է Չարենցի հետ, Նունե Հասրաթյանը նրանից հարցրել է, թե մեծամի՞տ էր Չարենցը, պապը մի բառով է պատասխանել՝ հանճարեղ էր: Պապի տան դռները միշտ բաց էին այցելուների համար, իսկ կիրակի օրը միշտ ճաշկերույթ էր լինում: Հասրաթյանենց տանը հաճախակի էին լինում բեյրութցի ուսանողներ (Մորուս Հասրաթյանը երկու տարի դասավանդել է Բեյրութի հայկազյան քոլեջում):

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սամվել Ալեքսանյանի ելույթը «Սյունյաց երկիր» թերթի՝ Մորուս Հասրաթյանին նվիրված հատուկ համարի շնորհանդեսում

Բարի երեկո, սիրելի հայրենակիցներ:

«Սյունյաց երկրի» հատուկ համարը՝ նվիրված Մորուս Հասրաթյանին, ընթերցողի սեղանին է, եւ կարող եք գնահատականներ տալ, դիտարկումներ անել:

Բայց ուզում եմ շնորհակալության, երախտագիտության խոսքով սկսել ասելիքս:

Շնորհակալություն եւ երախտագիտություն նախեւառաջ համարի հովանավորին, ով համեստաբար չհամաձայնեց, որ իր մասին հիշատակում արվի համարում:

Այդպես էլ վարվել ենք, բայց այսօր նրա անվան կողքով չենք կարող անտարբեր եւ լուռ անցնել ու հիացմունք չարտահայտել:

Համարի հովանավորը Միքայել Մինասյանն է:

Ձեզ՝ պարոն Մինասյան, մեր խմբագրակազմի, մեր ընթերցողների, բազում սյունեցիների երախտագիտությունն ենք փոխանցում:

Դուք հավատացիք մեր խմբագրակազմի ստեղծագործական ներուժին, մտավոր կարողություններին եւ Մորուս Հասրաթյանին նվիրված հատուկ համար հրատարակելու պատասխանատու առաքելությունը վստահեցիք մեզ:

Մեր ազգային ու հոգեւոր արժեքների հանդեպ Ձեր նվիրական վերաբերմունքը հայ մարդուն վաղուց է հայտնի:Դրա վառ օրինակը եղան այն ջանքն ու հետեւողականությունը, որ դրսեւորեցիք Սուրբ Գրիգոր Նարեկացուն Տիեզերական եկեղեցու վարդապետ հռչակելու, Վատիկանի այգիներում Գրիգոր Նարեկացու արձանը տեղադրելու գործերում:

Մորուս Հասրաթյանին նորովի ներկայացնելու նախաձեռնությունը մի նոր քայլ է հոգեւոր-մշակութային ոլորտում Ձեր հայրենանվեր գործունեության մեջ:

Ձեզ՝ հետագա հաջողություններ:

Հարգելի բարեկամներ

«Սյունյաց երկիրը» մի քանի ամիս հետո կդառնա 16 տարեկան:

Անցած տարիներին թերթի մի շարք հատուկ համարների շնորհանդեսներ են կազմակերպվել Գորիսում, Կապանում, Սիսիանում: Եվ դրանց մասնակցել են ճանաչված շատ գիտնականներ՝ մայրաքաղաքից ժամանած, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ նախագահը:

Պարոն Ռադիկ Մարտիրոսյանը մասնակցել է Խաչատուր Աբովյանին նվիրված բացառիկ համարի շնորհանդեսին:

Սակայն այսօրվա շնորհանդեսն ինչ-որ առումով յուրահատուկ է եւ աննախադեպ:

Առաջին անգամ է մեր թերթի հատուկ համարի շնորհանդեսը կազմակերպվում մայրաքաղաքում, այն էլ՝ այսպես՝ հանրապետության գիտական համայնքի երեւելի շատ դեմքերի մասնակցությամբ:

Այդ իրողությունը մեզ ուրախացնում է, ոգեւորում, քաջալերում եւ, իհարկե, պարտավորեցնում:

Շնորհակալություն բոլորիդ եւ յուրաքանչյուրիդ, որ կարեւորում, գնահատում եք թողարկված համարը:

Հավանաբար տեղյակ եք, որ 1996 թվականից մեզանում ձեւավորվեց պարբերական մամուլի եւ առհասարակ լրատվամիջոցների մի նոր միջավայր՝ մարզային լրատվամիջոցներ:

Սյունիքում նույնպես ծնվեցին մարզային թերթ, ռադիո, հեռուստատեսություն:

Մարզային թերթը երկու անգամ փոխեց անունը եւ կարգավիճակը՝ գործող օրենքների պահանջներով պայմանավորված:

Եվ 2003-ին հիմնադրվեց «Սյունյաց երկիր» խորենացիական անվանումը կրող մարզային թերթը, որ երբեք դադար չի ունեցել այդ ժամանակաընթացքում եւ գործում է մինչեւ այսօր:

Տասնօրյա պարբերականությամբ լույս տեսնող «Սյունյաց երկիրը» ժամանակ առ ժամանակ, ի սկզբանե, թողարկում է հատուկ համարներ. դա մեր լրատվամիջոցի կարեւորագույն առանձնահատկություններից է:

Անցած տարիներին թողարկել ենք մոտ 20 հատուկ կամ բացառիկ համար:

Դրանք համարներ են՝ նվիրված Եղիշե Չարենցին, Ակսել Բակունցին, Խաչատուր Աբովյանին, Համո Սահյանին, Սերո Խանզադյանին, Գուսան Աշոտին, Սուրբ Գրիգոր Տաթեւացուն, Սուրբ Մովսես Խորենացի ամենայն հայոց կաթողիկոսին, Քաշաթաղի Մելիք Հայկազն երկրորդին, նշանավոր բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցին եւ ուրիշ մեծերի:

Դրանք համարներ են՝ նվիրված Տաթեւի տիեզերահռչակ վանքին, Աստծո կապանյան գլխավոր տաճարին՝ Վահանավանքին, Կապան, Գորիս, Քաջարան քաղաքներին, Լեռնային Ղարաբաղին, Հայաստանի անկախության 25-ամյա անցած ճանապարհին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին…

Այնպես որ՝ վաղուց էր հասունացել Սյունյաց աշխարհի նշանավոր զավակ, մեծահամբավ գիտնական Մորուս Հասրաթյանին հատուկ համար նվիրելու խնդիրը:

Եվ 2016 թվականին հրապարակեցինք «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համար՝ նվիրված Մորուս Հասրաթյանին. 14 տպագրական մամուլ ծավալով, A3 չափսով:

Անշուշտ, հրաշալի գործ էր դա:

Պատահական չէ, որ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտխորհուրդը, հարգարժան Աշոտ Մելքոնյանի նախաձեռնությամբ, որոշեց «Սյունյաց երկրի» այդ համարը վերահրատարակել առանձին գրքույկով:

Դա նախադեպը չունեցող երեւույթ էր պարբերական մամուլի նորագույն շրջանի պատմության մեջ:

Սակայն ժամանակը ցույց տվեց, որ Մորուս Հասրաթյանի մասին ավելի ամբողջական ու ավելի բազմակողմանի խոսք ասելու անհրաժեշտություն կա:

Այդ պահանջարկի բավարարման արտահայտությունն էլ եղավ մեր թերթի նոր թողարկումը:

Կա մի իրողություն, որի մասին նույնպես պետք է բարձրաձայնել:

Մեր բոլոր հատուկ համարները, մասնագետների կարծիքով, համապատասխանում են գիտական հանդեսներին ներկայացվող չափանիշներին:

Իսկ դա նշանակում է՝ չլիներ մեր գիտական հանրության երեւելի ներկայացուցիչների աջակցությունը, չէինք կարող այդ ոլորտում պատշաճ մակարդակով որեւէ քայլ կատարել, նման համարներ հրատարակել:

Եվ, բարեբախտաբար, միշտ էլ ստացել ենք այդ աջակցությունը:

Նման դեպքերում միշտ էլ մեր առաջ բաց են եղել գրեթե բոլոր գիտական հաստատությունների դռները՝ Մատենադարան, ԳԱԱ ինստիտուտներ, Պետական համալսարան, Մանկավարժական համալսարան, թանգարաններ, Ազգային արխիվ, Ազգային գրադարան…

Այդ առումով շատ գիտնականների անուն կարող էինք հիշեցնել եւ նրանց մեր անկեղծ հարգանքն ընծայել: Եվ դա տեղին կլիներ:

Բայց բավարարվենք միայն այն գիտնականներին հիշելով, ովքեր այս համարի նախապատրաստման ամբողջ ընթացքում մեզ հետ էին. բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյան, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Բախչինյան, Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյան, Ազգային գրադարանի տնօրենի տեղակալ Հայկանուշ Ղազարյան, ուրիշներ:

Իսկապես, հպարտանալու տեղիք տվող իրողություն է. այդ մարդիկ անշահախնդիր ընդառաջել են մեզ, համբերատար, հետեւողական օգնել խմբագրությանը՝ թողարկվող համարին գիտական պատշաճ մակարդակ հաղորդելու համար:

Մեր խմբագրակազմի շնորհակալությունն ենք հայտնում նրանց, նաեւ մեծ հայագետի որդուն՝ Մուրադ Հասրաթյանին, որ աջակցությունը զգացել ենք համարի նախապատրաստության ամբողջ ընթացքում:

Մեր առանձնահատուկ հարգանքը «Սյունյաց երկրի» վաղեմի բարեկամ, ճանաչված հեռուստալրագրող Արտակ Ալեքսանյանին. ինքն էր համակարգում կապը հովանավորի եւ խմբագրության միջեւ, արագ լուծումներ գտնում ծագող բոլոր հարցերի:

Մոտ 40 տարի առաջ մահկանացուն կնքած Մորուս Հասրաթյանն այսօր էլ իր բնօրրանում՝ Սյունյաց աշխարհում, մեծ հեղինակություն է վայելում եւ հպարտանալու տեղիք տալիս երկրամասի բնակիչներիս:

Դրանում վերստին համոզվեցինք այն բանից հետո, երբ թերթի այդ համարը լույս տեսավ:

Առանց չափազանցության կարող ենք փաստել՝ վերջին մեկ ամսում մարզի մտավորականության, ընթերցող հասարակության քննարկումների, խոսակցությունների գլխավոր թեման Մորուս Հասրաթյանին նվիրված համարն է, նրա գիտական ժառանգությունը:

Արձագանքները բազմաբնույթ են:

Մարդիկ ոչ միայն գոհություն են հայտնում, այլեւ դիտարկումներ անում, նորանոր էջեր հայտնաբերում նրա կյանքին եւ գործունեությանն առնչվող:

Ծիծեռնավանքում, Կորնիձորում, Անգեղակոթում, որտեղ եղանք մեկ շաբաթ առաջ, մարդիկ իրենց տարածքի պատմական հուշարձանների մասին պատկերացում են կազմում բացառապես ըստ Մորուս Հասրաթյանի:

Ախլաթյանում, Սիսիանում մարդիկ ցույց են տալիս, թե կոնկրետ որ դաշտամասում, որ ավերակում է Մորուս Հասրաթյանը պեղումներ կատարել:

Պատմում են նրա մարդկային վեհ հատկանիշների մասին:

Ախլաթյանում մարդիկ հպարտությամբ են ցույց տալիս այն տունը, որ1931-ին, հայտնի երկրաշարժից հետո, կառուցել է Ստեփան դային՝ Մորուս Հասրաթյանի հայրը:

Դե իսկ նրա բանավիճային հոդվածներին՝ կապված Մովսես Խորենացու ծննդավայրի, Վարդան Մամիկոնյանի ենթադրյալ գերեզմանի մասին, տեղյակ են գրեթե բոլոր սյունեցիները:

Համարի նախապատրաստության ընթացքում եւս մեկ անգամ բախվեցինք իրողությանը, որ մինչեւ հիմա ըստ պատշաճի չի հավերժացվել ականավոր գիտանականի, մեծ սյունեցու հիշատակը:

Այդ հանգամանքի վրա եւս մեկ անգամ հրավիրում ենք պատկան մարմինների ուշադրությունը:

Մինչեւ հիմա ընթերցողի սեղանին չի դրվել Մորուս Հասրաթյանի գիտական ամբողջ ժառանգությունը:

Իսկ նրա կողմից կազմված, խմբագրված, ծանոթագրված որոշ գրքեր հնարավոր չէ գտնել գրադարաններում:

Նկատի ունենք հատկապես Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածուն՝ հրատարակված 1963-ին:

Այդ հանգամանքի վրա նույնպես հրավիրում ենք պատկան մարմինների ուշադրությունը:

Ուզում ենք տեղեկացնել նաեւ, որ «Սյունյաց երկիրը» այսուհետ նույնպես, ընթացիկ համարներին զուգահեռ, շարունակելու է թեմատիկ համարների հրատարակումը:

Ներկայումս աշխատանքներ են տարվում Խնձորեսկ գյուղին նվիրված հատուկ համար պատրաստելու ուղղությամբ:

Ծրագրված է առաջիկա տարում թողարկել հատուկ համարներ՝ նվիրված Սուրբ Հովհան Որոտնեցուն, Մեղրի քաղաքին, Բղենո Նորավանքին:

Իսկ մինչ այդ եւս մեկ անգամ խոնարհվենք բազմաշնորհ, ինքնատիպ ու լայնախոհ գիտնականի՝ Մորուս Հասրաթյան անընդգրկելի երեւույթի հիշատակի առջեւ ու գոհություն մատուցենք Բարձրյալին, որ Սյունյաց բարեբեր արգանդն այդպիսի անհատականություն է պարգեւել հայ ժողովրդին:

22 մարտի 2019թ

Արթուր Գրիգորյանն անդրադարձել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ստուգման արդյունքներին

էջ 1

բնապահպանական մասի, ընդերքի վերաբերյալ ընկերությունը պիտի տրամադրի համապատասխան հաշվետվություններ, որոնք կարող է տրամադրել միայն տարին ավարտվելուց հետո: Մենք ստուգումը սկսել ենք 2018 թ. սեպտեմբերի 10-ին, երբ տարին չէր ավարտվել, մենք 2018-ը չէինք կարող ներառել, իսկ 2015, 2016 թվականներին ստուգումներ անցկացվել են ընդերքի մասով: Մեր ստուգումներին հատկացվել էր 4.5 ամիս, ճիշտ է, այն ներառում է նաեւ բնապահպանական մասը, նախկին ստուգումները բնապահպանական բաղադրիչը չէր ներառում, քանի որ կառավարության որոշումներով կասեցված էր ստուգումների գործընթացը, իսկ հիմա ներառվել է նաեւ բնապահպանականը: Սա հարցի պատասխանը. 2017 թվականն է ստուգվել, որովհետեւ 2017 թ. հունվարի 1-ը արդեն ստուգվել էր ընդերքի մասով, 2017-ից հետո մի ամփոփ տարի պիտի լիներ, որ կարողանայինք լիարժեք ստուգում իրականացնել:

Հաջորդը. ի՞նչ ասել է ստուգում: Եվ ովքե՞ր են պատասխանատու:

Ես արդեն մի անգամ խոսել եմ պատասխանատվության հարցի մասին, երբ քննարկվում էին Ամուլսարում իրականացված ստուգումները, դրա արդյունքներին հաջորդող գործողությունները: Սա եւս պատասխանատվության հարց է: Բայց նախ հասկանանք՝ ի՞նչ ասել է ստուգում: Այստեղ կա երկու առանձին վարույթ, մեկը՝ ստուգումն է, որ սկսվում է հանձնարարականը տրամադրելուց, որից հետո խմբի մեջ ներգրավվում են համապատասխան մասնագետներ, իրազեկվում է ընկերությունը, նրա պաշտոնատար անձինք, ովքեր պատասխանատու են այս կամ այն ոլորտի համար: Այսինքն՝ մի պրոցես է ընթանում, որի շրջանակում դու ըստ ստուգաթերթում ներկայացված հարցերի իրականացնում ես ստուգում:

Հաջորդիվ, երբ ստուգումն ավարտվում է, սկսվում է հաջորդ վարույթը, ամփոփման եւ արդյունքների իրավական հետեւանքների կիրառման փուլը: Հիմա ի՞նչ է կատարվել, ստուգումը կատարվել է, մասնագետներն իրենց աշխատանքը կատարել են, եւ անսահման շնորհակալ եմ իրենց, որովհետեւ մարդիկ շատ բարեխիղճ են աշխատել, որից հետո արդեն պետք է համապատասխան արդյունքներով կիրառվեն իրավական հետեւանքներ: Ուզում եմ ասածս հաստատել Ամուլսարում իրականացված ստուգման մասով, որովհետեւ սա շատ համեմատելի գործընթաց է. պետք է հասկանալ այստեղ, արդյո՞ք, միատեսակ են կիրառվում օրենսդրությունը, գործընթացները: Դա անխուսափելի է, այդ հարցերին պիտի պատասխանել: Դրանք հանրային հետաքրքրության առաջացնող հարցեր են, որոնց մասին պետք է խոսել, որոնց պատասխանները պետք է տալ: Ամուլսարի ստուգման ավարտից հետո արդեն ակտը հրապարակվել էր, ընկերությունն իր ձեռքով էր դա հանձնել, եւ այնտեղ բախումներ եղան: Այդ ընթացքում ընկերությունը տրամադրեց ակտը եւ այն ըստ ամենայնի հրապարակված էր: Հաջորդիվ տեսչական մարմինը հրապարակեց հանձնարարականը, այն է՝ ձեռնպահ մնալ ընդերքօգտագործման ոլորտում ցանկացած գործունեությունից: Հաջորդը ներկայացվեց, թե ինչ միջնորդագրեր են ներկայացվել այլ գերատեսչություններին. մասնավորապես բնապահպանության նախարարությանը ներկայացվել է առաջարկություն՝ ուժը կորցրած ճանաչել տրված ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունը: Նշվեց, որ զեկուցագիր է ներկայացվել վարչապետին՝ Ամուլսարում գործունեություն իրականացնող կապալառու ընկերություններում ստուգումներ իրականացնելու համար, որովհետեւ մեզ պետք էր ամբողջական հասկանալ, թե այն նախագիծը, որ փորձաքննություն է անցել եւ իրականացվում է, գործունեությունը համապատասխանո՞ւմ է արդյոք փորձաքննության պայմաններին եւ այդ գործունեությունն ամենեւին միայն ընկերության բուն աշխատանքի արդյունքով չէ, որ պիտի գնահատվի, այլ նաեւ այդ նախագծի շրջանակներում, այլ կապալառու ընկերությունների գործունեության արդյունքով, այսինքն՝ կատարվեցին մի շարք փոխկապակցված գործողություններ, որոնց արդյունքում մենք պիտի ունենայինք եւ ունեցանք ամբողջական պատկեր: Ավելին ասեմ, նույնիսկ վարույթ էր հարուցվել եղեգնաձորի ջրօգտագործման ընկերության նկատմամբ՝ ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտման համար, հետո ջրային պետական կոմիտեն ներգրավվեց այդ պրոցեսում, Գնդեվազի գյուղապետարանը մեկ այլ գործով, այսինքն՝ մի ամբողջական պատկեր:

Հիմա հրապարակվել է նյութ, որից չեմ կարող հետեւություն անել, դա ամբողջակա՞ն ակտն է, թե՞ ոչ (խոսքը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մասին է): Նշված էր, որ հանձնարարականներ են տրամադրվել, բայց բովանդակությունը պարզ չէր: Չգիտեմ՝ նման հանձնարարական տրվել է՝ ձեռնպահ մնալ ընդերքօգտագործման գործունեության իրականացումից, կամ միջնորդագիր տրվել է բնապահպանության նախարարությանը՝ ուժը կորցրած ճանաչել տրված փորձաքննական եզրակացությունը, թե ոչ:

- Իսկ այլ բաներ կա՞ն, որ չեն հրապարակվել:

-Գիտե՞ք, դա օրենքով սահմանված չէ, ավելի շատ թափանցիկության, հայեցողականության տարր կա այստեղ: Կախված է նրանից, թե տվյալ պահին ինչն է կարեւոր համարվում: Շատ հարցերում մենք էլ ամբողջական ստուգման ակտը չենք հրապարակել, այլ պարզապես տեղեկատվություն ենք տրամադրել ընդհանուր թվերով, ընդհանուր խախտումներով եւ այլն:

- Ենթադրաբար, եթե հարցում գրես, գուցե տրամադրե՞ն:

- Անպայման, ոչ թե գուցե, այլ պիտի ներկայացվի, եւ հետաքրքրված բոլոր մարդկանց հորդորում եմ հարցմամբ ձեռք բերել ամբողջական փաթեթը, թե ինչ հանձնարարականներ են տրամադրվել, ինչ միջնորդագրեր են ներկայացվել, կա՞ արդյոք, թե՞ չկա ամբողջական ստուգման ակտը, վնասի հաշվարկի վերաբերյալ առանձին փաստաթղթե՞ր են կազմել այդ վնասի հաշվարկի վերաբերյալ եւ այլն: Երբ ունենանք ամբողջական փաթեթը, դրանից հետո միայն հնարավոր կլինի լիարժեք հետեւություններ անել արդյունքների մասին:

- Իսկ այդ հրապարակման մասով բոլոր ստուգումների մասին կա՞ն, թե՞ ոչ:

- Եկեք այսօր ես չհրապարակեմ բովանդակային հարցեր, որովհետեւ դրանց այսպես, թե այնպես անդրադառնալու ենք: Ի վերջո Կապանում, Սյունիքում շատ հետաքրքրված են, շահագրգռված են լիարժեք ամբողջական պատկերն ունենալու համար, իրենք էլ են հարցեր բարձրացնելու, այնպես չէ, որ մի հրապարակումով այս հարցը կամփոփվի եւ կփակվի: Ի վերջո հասարակությունը հետաքրքրվածություն է դրսեւորում այս հարցի վերաբերյալ, նաեւ չմոռանանք, որ այլ ընկերություններ, ովքեր անընդհատ խոսում են, որ միատեսակ պետք է օրենսդրությունը կիրառվի, իրենք եւս հարցեր են առաջադրելու, այսինքն անխուսափելի է դա, այդ մասին դեռ պիտի խոսենք:

Բայց ինչեւէ, վերադառնանք շեշտադրումներին, որոնք հիմա այս պահին կարեւոր եմ համարում ֆիքսել, հետո բովանդակային հարցերին առիթ կունենանք անդրադառնալ: Ես երկու հարց շոշափեցի՝ բուն տեսչական գործողություններ եւ ամփոփում: Հիմա ո՞վ է պատասխանատու այդ արդյունքների համար:

- Մանավանդ որ տեսչական խմբի ղեկավար նշանակված չէ:

- Այո, չկա ներկայացված ղեկավար, բայց խոսքը միայն դրա մասին չէ: Այո, իրավական տեսանկյունից տեսչական մարմինն է որոշում կայացնում եւ իրավական հետեւանքների կիրառման հարցը պարզում, տվյալ պարագայում տեսչական մարմինն է, մարմնի ղեկավարը կամ ժամանակավոր պաշտոնակատարն են դրա վերաբերյալ որոշումներ ընդունում: Բայց մենք չմոռանանք, թե ինչ տեղի ունեցավ տեսչությունում, երբ հենց այս հանքավայրում ստուգումների ավարտման օրը տեսչական մարմնի ղեկավարն ազատվեց աշխատանքից: Չմոռանանք, թե ինչ հիմնավորումներով:

- «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամում Նիկոլ Փաշինյանին հարցրել էին Ձեր ազատման վերաբերյալ, պատասխանել էր, թե տեսչական ղեկավարի գործունեության արդյունավետությունը ցածր է գնահատում:

- Այո, ոչ միայն Նիկոլ Փաշինյանը, այլեւ Տիգրան Ավինյան փոխվարչապետն է անդրադարձել իմ ազատմանը, ընդ որում՝ վարչապետը պատասխանել էր գերմանացի լրագրողի հարցին, որ վերաբերում էր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում կատարված ստուգումներին: Եվ հարցի պատասխանը եղել է այն համատեքստում, որ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող ստուգումների արդյունքները վարչապետն արդյունավետ չի գնահատել եւ մինչ այդ նա նշել էր, թե շահագրգռված է, որ Հայաստանում հանքարդյունաբերությունն իրականացվի ամենաբարձր մակարդակով: Սա պարտավորեցնող հայտարարություն է, որովհետեւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի վերաբերմամբ պիտի արտացոլված լինեն էկո Հայաստանի վերաբերյալ սկզբունքները: Եթե տեսչական մարմնի ղեկավարի գործունեությունը չի համապատասխանում այդ չափանիշներին, եւ այդ հարցը բարձրացվել է հենց այս հանքավայրում ստուգումների համատեքստում ու ենթադրաբար տեսչական մարմնի ղեկավարն ազատվել է աշխատանքից մինչեւ ստուգումների արդյունքների ամփոփման փուլը, հարց է ծագում, թե ամփոփման արդյունքում կայացված որոշումը կամ որոշումները համապատասխանո՞ւմ են արդյոք այդ կոնցեպտին: Ինձ հետաքրքիր է, եթե այս հարցը տրվի վարչապետին, փոխվարչապետին, մարդկանց, իրենք ինչպե՞ս կարծագանքեն, ի՞նչ կասեն: Ստուգումների արդյունքները համապատասխանո՞ւմ էին էկո Հայաստանի կոնցեպտին, համապատասխանո՞ւմ էին Եվրամիությունում եւ Գերմանիայում իրականացվող ստանդարտներին, համապատասխանո՞ւմ են այդ հանքավայրի գործունեության չափանիշներին: Եվ ի՞նչ են պատասխանելու, ասելու են՝ այո, ասելու են՝ ոչ, ասելու են տեսչությունից հարցրեք: Ի՞նչ են անելու: Եթե դու դժգոհ ես ինչ-որ պաշտոնյայից եւ նրան ազատում ես աշխատանքից, ենթադրաբար դու գիտես, չէ, որ ինքը լավ չի աշխատում եւ ի՞նչ պիտի անել, որ լավ աշխատի: Հիմա դու այս մարդուն ազատեցիր աշխատանքից եւ ունես կոնկրետ արդյունքներ, թույլ չտվեցիր, որ ինքն այդ արդյունքներն ամփոփի, հիմա այդ արդյունքները քեզ գոհացնո՞ւմ են Եվրամիությունում եւ Գերմանիայում իրականացվող հանքարդյունաբերության չափանիշների կիրառման համատեքստում: Արդյո՞ք հիմա ավելի լավ է, քան տեսչական խմբի ղեկավարի աշխատանքի արդյունքում, ավելի արդյունավե՞տ է, ավելի համապատասխանո՞ւմ է չափանիշներին, թե՞ ոչ: Սա է հարցը: Հիմա պատասխանատվության հարց է բարձրանում, ո՞վ է այս տեսչական ստուգման պատասխանատուն: Եվ ամենակարեւոր հարցը, ո՞վ է պատասխանատու արդյունքների ամփոփման համար: Եվ ուզում եմ, որ հստակ տարանջատում մտցվի երկու վարույթի միջեւ՝ ստուգման վարույթ եւ իրավական հետեւանքների կիրառման վարույթ:

- Արծվանիկի պոչամբարի հետ կապված տարիներ շարունակ բարձրաձայնում են, որ այն լցվել է, փակելու ժամանակն է, այլեւս չխոսելով այն մասին, որ պոչամբարի մերձակայքում կովեր են արածում, արոտավայրեր են մնում ջրի տակ, ի՞նչ կասեք այս առումով:

- Հիմա ճիշտ չի լինի, որ ես անդրադառնամ բովանդակային այդ հարցերին, քանի դեռ մենք չունենք ստուգման ակտը: Արդեն ասացի, որ տեղյակ չեմ, թե ստուգման ակտում, արդյո՞ք արտացոլված են բոլոր իրավախախտումները, թե՞ ոչ: Եթե ստուգման ակտով պարզվի, որ ամեն ինչ ներառված է, ապա այդ պարագայում մի համատեքստում քննարկում պիտի լինի, եթե պարզվի, որ ոչ, ապա այլ կոնտեքստում կլինի քննարկում: Ընդ որում՝ երբ իրականացվել են իմ ասած գործողությունները, ամենեւին դրանից չի հետեւում, որ դրանք ամփոփելու փուլում անպայման ֆիքսվեն իրավախախտումներ: Ես չգիտեմ լաբորատորիան ջրի փորձանմուշներում ի՞նչ արդյունքներ է երեւան հանել: Ի դեպ, երբ երկրորդ անգամ գնացինք ջրի եւ տիղմի փորձանմուշներ վերցնելու, հունվարի 20-նն էր, իսկ 21-ին ինձ ազատեցին աշխատանքից: Մինչեւ վերջին օրը մենք այնտեղ ստուգման գործընթացներ ենք իրականացրել:

Հիմա խոսենք կոնցեպտուալ հարցերի մասին: Մի քանի շեշտադրումներ ամփոփման կարգով ասեմ. առաջինը՝ ստուգման արդյունքները որքանո՞վ են արտացոլում բուն ստուգման գործընթացը, գուցե արտացոլո՞ւմ են, երկրորդ՝ ո՞վ է պատասխանատվություն կրում դրա համար (տեսչական մարմինը հասկանալի է, այո, իրավական տեսանկյունից), **բայց մի՞թե քաղաքական պատասխանատվություն չի կրում գործող բարձրագույն իշխանությունը, կոնկրետ այն պաշտոնատար անձինք, ովքեր ամփոփման փուլում առանց քննարկման, առանց կարծիք հարցնելու, առանց պատճառաբանության ներկայացնելու պարզապես ազատեցին տեսչական մարմնի ղեկավարին իր զբաղեցրած պաշտոնից**: Հարցն այն է, որ կիսատ մնացած գործեր կային, ի վերջո, երբ ինձ պաշտոնից ազատեցին, բնավ չի նշանակում, որ ես չպետք է զբաղվեմ բնապահպանական գործերով:

- Ուզում եմ մի հարց տալ զուտ որպես բնապահպանի. նշված էր, որ ընկերությունը 22 մլն տոննայի փոխարեն 27 մլն տոննա հանքաքար է արդյունահանել: Հենց միայն սրանից երեւում է, որ ընկերությունն իրեն տված լիցենզիան խախտել է եւ ընդհանրապես նման խոշոր արդյունաբերական ձեռնարկության տարիներ շարունակ ընդերքը շահագործում է, ինչ-որ բնապահպաններ անընդհատ ահազանգում են, բնությունն արդեն անհնար է փրկել, ի՞նչ կարելի է անել նման ընկերության դեմ: Ձեռնարկությունը փակել, կնշանակի սոցիալական ընդվզում առաջացնել, դա լրիվ ուրիշ թեմա է, միայն հանձնարարականնե՞ր տալ, թե՞ ինչ: Որպես բնապահպանի եմ Ձեզ դիմում:

- Առհասարակ չպետք է պետությունը որեւէ կերպ հանդուրժի, որ փորձ արվի պետության մեջ ստեղծվի պետություն, այսինքն՝ եթե պետությունը տվել է թույլտվություն, ինչ-որ գործունեություն ծավալելու համար, թույլտվություն ստացողը, մանավանդ երբ խոսքն այս մասշտաբների եւ այսպիսի ձեռնարկության մասին է, որը հանրային գույք է ըստ էության օգտագործվում, իրեն այնքան իրավունքներ պիտի վերապահի, որ հանգիստ տարիներ շարունակ թույլ տա խախտելու այդ տարրական պայմանները: Դեռ չեմ ուզում ասել այն, որ որոշ բաներ օբյեկտիվորեն պիտի խախտվեն՝ փոշու արտանետում, հավելյալ ջրառ եւ այլն: Բայց կոնցեպտուալ հարցերում չպետք է ունենա այնքան իրավազորություն, որ ինչ ուզենա՝ անի, լինի դա «Արմօյլ», որ ասում եմ իրավունք չունես, շարունակում է շինարարություն իրականացնել, լինի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ եւ այլն: Պետությունն իր վարչահրամայական գործառույթները պիտի իրականացնի այնպես, որ որեւէ մեկի մտքով իսկ չանցնի նման քայլերի դիմել: Սա պատվախնդրության, պետական համակարգի ինքնիշխանության տեսանկյունից: Իշխանության հեղինակության հարց կա, եթե քեզ այսքան է տրված, այդքան պիտի անես:

Երկրորդ՝ պատասխանատվության հարց է ծագում: Արդյո՞ք այն իրավախախտումները, որոնք արձանագրված են, պատասխանատուների համար չեն առաջացնում քրեաիրավական հետեւանքներ: Սրանք գնահատման ենթակա հարցեր են, որոնց մասին կարող ենք խոսել առավել ամբողջական բովանդակային պատկեր ունենալուց հետո: Եվ առհասարակ, երբ մենք ունենանք ամբողջական հանձնարարականներ, միջնորդագրեր,

Քաջարանի կոմբինատի մեկօրյա ֆինանսական սպուգման ոդիսականը

էջ 3

պարզաբանումներով:

–Այսօրվա ասուլիսի՝ բյուջե վերականգնված փողերի մասին թեմայի շարժառիթով մեր հաջորդը հարցը վերաբերում էր այդքան քննարկված ՊԵԿ պարգեւավճարների վերադարձման հանրային պահանջին: Մասնավորապես հետաքրքիր էր իմանալ՝ արդյո՞ք ՊԵԿ-ում քննարկվել է ընդառաջ գնալ պարգեւավճարների դեմ բողոքի ակցիային եւ թեկուզ մասնակի՝ բյուջե վերադարձնել 2018-ի հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում ՊԵԿ-ի աշխատա-

«168 ժամը» հրապարակել էր, որ 2018 հարկային եկամուտների փաստացի մեծությունը՝ 1,257.9 մլրդ դրամ, ուռճացված է ներկայացվել ՊԵԿ-ի կողմից, հարկային մուտքերը չեն ապահովվել եւ կատարվել են կեղծիքներ, որպեսզի թերակատարումը մեղմ ցուցանիշով արձանագրվի: Իսկ 2018-ի բյուջեի թերակատարումը՝ նշված 3.6 մլրդ դրամից շատ ավելի մեծ է եղել իրականում, քանի որ արհեստականորեն ավելացվել է 2018թ. դեկտեմբերի ընթացքում հարկային եկամուտ ճանաչված գումարների մեծությունը:

Ռուստամ Բադասյան, ՊԵԿ նախագահի տեղակալ

Մեր Պոլոսկով, «ՀՊՄԿ» ՓԲԸ տնօրեն

Դավիթ Անանյան, ՊԵԿ նախագահ

կազմին բաշխված 6.8 մլն դոլարից:

– ՊԵԿ պարգեւավճարների մասով թեման բավականին լայն արձագանք է ստացել՝ ընդհուպ Կառավարությունում: Դրանից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվել՝ եթե ինչ-որ չափով միգուցե շատ է տրվել պարգեւավճարը, դա այսուհետ բացառվի, թեեւ ասեմ, որ ամեն ինչ օրենքի շրջանակներում էր իրականացվել: Իսկ օրենքի շրջանակներում բաշխված պարգեւավճարից թեկուզ մաս անգամ բյուջե վերադարձնելու մասին խոսք լինել չի կարող, ի վերջո, ի՞նչը վերադարձնել բյուջել, ինչո՞ւ կամ ումի՞ց վերադարձնել բյուջե:

Հիշեցնենք, Yerevan.today.am կայքը ՊԵԿ պաշտոնական տեղեկանքի հիման վրա հաշվարկել եւ **հրապարակել էր** միայն հետհեղափոխական շրջանում ՀՀ Պետեկամուտների կոմիտեում եւ, այն էլ՝ հիմնականում ղեկավար կազմին, բաշխված միլիոնավոր դոլարների պարգեւավճարները: Այսպես՝ 2018 մայիս-դեկտեմբեր ամիսներին **ՊԵԿ-ում միայն մաքուր պարգեւավճարները միջին փոխարժեքով, կազմել են 6 մլն 826 հազար դոլար** (3 մլրդ 296 միլիոն 877 հազար 033 դրամ):

ՊԵԿ ողջ անձնակազմին տրված հավելավճարները՝ 2018թ. մայիս-դեկտեմբեր ամիսների համար, կազմել են **166 մլն 475 հազար դրամ** (հարկերով):

ՊԵԿ ողջ անձնակազմին տրված պարգեւավճարները 2018թ. մայիս-դեկտեմբեր ամիսների համար՝ կազմել են 3 մլրդ 296 միլիոն 877 հազար 033 դրամ (պահումներից զատ):

2018թ. մայիս-դեկտեմբեր ժամանակահատվածում ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանի աշխատավարձը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերից զուրկ) կազմել է 3 մլն 798 հազար 604 դրամ, հավելավճարը՝ 0 դրամ, պարգեւատրման գումարը (հարկերի պահումներից հետո)՝ 14 մլն 079 հազար 031 դրամ:

Սյուզի Բադոյան
Հ.Գ.

Ստուգման ակտը կազմվել է նախապայմանով, որ գանձված գումարը հունվարին կվերադարձնեն միասնական հաշվին, եւ տնտեսվարողը հաշվետվությունների ներկայացման միջոցով կկարողանա դրանք օգտագործել հարկային պարտավորությունները մարելու համար:

168.am-ի հրապարակմանը, ըստ որի՝ 2018 թվականի հունվարի 1-ից սկսած՝ Հարկային օրենսգրքի գործարկմամբ՝ հարկատուների միասնական հաշվին առկա գումարները հարկային եկամուտներ չեն համարվում, փոխարենը՝ հարկային եկամուտ կարող են համարվել միայն հարկային հաշվարկով, ստուգման ակտով կամ այլ հիմքով ծագած հարկային պարտավորությունների դիմաց վճարված գումարները, ՊԵԿ-ն իր պաշտոնական հաղորդագրության մեջ այսպես էր արձագանքել:

«Մինչեւ 2018թ. հունվարի 1-ը՝ հարկահավաքման գործընթացում կիրառվում էր եկամուտների հաշվառման դրամարկղային մեթոդը, այսինքն՝ հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշվին փաստացի կատարված վճարումները, անկախ հարկային հաշվարկների ներկայացման կամ ստուգման ակտերի առկայության հանգամանքից, համարվում էին այդ տարվա պետական բյուջեի եկամուտ: Սակայն նոր հարկային օրենսգրքի պայմաններում արդեն վերացել է բազմաթիվ գանձապետական հաշիվներ ունենալու անհրաժեշտությունը եւ, այսպես կոչված, «գերավճարի թվի մաշեցման կեղծման» անհրաժեշտությունը:

Հետեւապես՝ ՀՕ կիրառումից հետո միասնական հաշվին կատարված վճարումները չեն համարվում պետական բյուջեի հարկային եկամուտներ եւ վճարներ, քանի դեռ դրանց հաշվին պարտավորություններ չեն մարվել»:

«Թավշյա հեղափոխություն»՝ զորամասերից մեկում

Օրերս Մեղրիի զորամասում տեղի ունեցած մի միջադեպ մեծ աղմուկի պատճառ է դարձել: Ամեն ինչ սկսվել է նրանից, որ զինծառայողներից մեկը ցանկացել է փոխել իր վաշտը, այդ պահանջով դիմել է զորամասի ղեկավարներից մեկին, մերժում է ստացել, ինչից հետո ամբողջ գունդը լքել է զորամասը: Այս պատմության մեջ ակտիվ դերակատարում են ունեցել մի քանի զինվորներ, որոնք կարողացել են ազդել այլ զինվորների վրա եւ կազմակերպել այդ «բողոքի ակցիան»: Տեղի ունեցածից հետո այդ զինվորները պատժվել են՝ տեղափոխվելով սկզբում Կապանի, ապա Ստեփանակերտի կարգապահական զորամասեր, դրանից հետո էլ՝ առաջնագիծ:

Պաշտպանության նախարարության մամլո խոսնակ Արծրուն Հովհաննիսյանն ասել է, որ կատարվում է քննություն եւ որ պատժի ենթարկված զինվորներն այլեւս չեն վերադառնալու իրենց նախկին զորամասեր:

Ուշագրավ է, որ պատժված զինվորների ծնողները բողոքի ակցիա են կազմակերպել Կառավարության շենքի դիմաց՝ պահանջելով իրենց որդիներին տեղափոխել ծառայության նախկին զորամաս, որպեսզի նրանք ծառայություն չիրականացնեն Արցախում՝ առաջնագծում: Նշենք, որ միջադեպի առիթով բացի շարքային զինծառայողներից, պատժի են ենթարկվել նաեւ հրամանատարական կազմի ներկայացուցիչներ, մի քանի սպաներ պաշտոնանկ են արվել: Ինչ հանգուցալուծում ու իրավական հետեւանքներ կստանա այս միջադեպը, ցույց կտա ժամանակը: Դժբախտաբար, սա զինված ուժերում եզակի դեպք չէ: Նման իրավիճակներ բանակում առաջանում են պարբերաբար, պարզապես ոչ բոլորն են հանրային հնչեղություն ստանում: Այս միջադեպի հետ կապված մտահոգիչ է ոչ միայն զինվորների վարքագիծը, այլ նաեւ նրանց ծնողների՝ բողոքի ակցիա կազմակերպելու հանգամանքը:

Տեղի ունեցածը հասարակական հարաբերություններում առկա արատավոր երեւույթների խտացված արտահայտությունն է: Միջադեպը հրահրած զինվորներն իրենց իրավիճակի տեր են զգացել, համարել են, որ դա կարող են օգտագործել մյուսների վրա ազդելու նպատակով եւ ըստ էության սաբոտաժի են ենթարկել ամբողջ գնդի ծառայությունը: Այս ամենում, ի դեպ, որոշակիորեն առկա է նաեւ «հեղափոխականության» հետքը: Թավշյա հեղափոխությունից հետո հասարակության շատ անդամներ, բազմաթիվ շերտերի ներկայացուցիչներ «վարակվելով» տեղի ունեցածով համարում են, որ յուրքանչյուրը կարող է իրականացնել իր «հեղափոխությունը»: Դրա վկայությունն են տարբեր խնդիրների պատճառով գրեթե ամեն օր փակվող փողոցներն ու մայրուղիները, բողոքի տարբեր ակցիաներ: Ահա այդ զինվորներն էլ փորձել են իրենց զորամասում հեղափոխություն իրականացնել եւ պատժվել են: Սակայն նրանց ծնողներն ընդվզում են պատժվելու առթիվ ու բողոքի ակցիա են իրականացնում Կառավարության շենքի առջեւ: Նրանց բողոքի հիմքում ընկած է հետեւյալ տրամաբանությունը՝ «հեղափոխություն ենք արել, որ մեր երեխաները պատժվե՞ն»: Ճիշտ այնպես, ինչպես նրանց որդիներն են մտածել՝ «փողոց ենք փակել, որ մեր ուզած վաշտում չկարողանա՞նք ծառայել»:

Թավշա հեղափոխությունը հասարակությանը դարձրել է ավելի համարձակ, բայց ոչ միշտ է, որ այդ համարձակությունը դրական դրսեւորումներ է ստանում: Համարձակությունը շատ հաճախ տրանսֆորմացվում է ամենաթողության: Դրանում մեղքի իր բաժինն ունի նաեւ իշխանությունը, որը շատ հաճախ համարժեք չի արձագանքում տարբեր բողոքի ակցիաներին: Օրինակ, երբ օրեր շարունակ Մանվել Գրիգորյանին ազատազրկելու պահանջով փակված էր Երեւան-Էջմիածին մայրուղին, այդ թվում՝ օդանավակայան տանող ճանապարհը, իշխանությունը չէր համարձակվում համարժեք գործողությունների դիմել՝ կատարելով իր սահմանադրական պարտականությունները: Լայն իմաստով, մայրուղին փակած քաղաքացիների ու զորամասը լքած զինվորների արարքը նույնական է: Նրանք բոլորն էլ իրացրել են «սեփական հեղափոխության իրավունքը»:

Թավշյա հեղափոխությունից հետո շատ է խոսվում արժեքային հեղափոխության անհրաժեշտության մասին: Դա, ցավոք, դեռեւս տեղի չի ունեցել: Թավշյա հեղափոխությամբ իշխանության եկած քաղաքական թիմին, ավելի լայն իմաստով՝ նոր էլիտային դեռեւս չի հաջողվել հանրային կյանք ներմուծել նոր արժեքներ, վարքագծային այնպիսի նորմեր ու չափորոշիչներ, որոնք քաղաքացիների համար կլինեն ուղենիշային՝ օրենքների ենթարկվելու, իրավապաշտ լինելու առումով: Հայաստանի քաղաքացիները թավշյա հեղափոխությունից հետո դարձել են միայն իրավատեր, բայց ոչ իրավապաշտ:

Թերեւս այն պատճառով նաեւ, որ այդպիսի վարքագիծ են ցուցաբերում նաեւ իշխանության շատ անդամներ, իսկ լայն իմաստով՝ իշխանությունն ամբողջությամբ:

Հեղինակ՝ Գառնիկ Գեւորգյան
1in.am

հնարավոր կլինի խոսել քաղաքական պատասխանատվության մասին:

Որովհետեւ բացի տեսչական մարմնից, որ վարչական մարմին է եւ բացառապես պարտավոր է առաջնորդվել օրենքով, բայց չէ՞ որ կա նաեւ քաղաքական որոշման հարց: Հիմա ո՞վ է այս որոշման տերը. տեսչական մարմի՞նը, որ պարտավոր է բացառապես իրավական շրջանակներում հարցին լուծում տալ, թե՞ քաղաքական մարմինը, կառավարությունը, քաղաքական իշխանությունը, որ իրավասու է նաեւ քաղաքական լուծումներ տալ: Բայց դա վարչական մարմնի որոշելիքը չէ, դա քաղաքական մարմնի որոշելիքն է, ով պետք է քաղաքական որոշումն ապահովի իրավական հենքով: Հիմա չգիտեմ՝ ո՞վ է որոշումն ընդունել: Ես ուզում էի վարչապետի հետ զրուցել քաղաքական որոշման անհրաժեշտության մասին:

- Պատրաստվո՞ւմ եք հանդիպել վարչապետի հետ:

- Ոչ, պարզապես իմ տեսակետն եմ հայտնել այս որոշման պատասխանատուի մասով: Շատ կարեւոր է հենց հիմա այս փուլում ճշտել, թե ո՞վ է պատասխանատուն այս որոշման: Ովքե՞ր են պատասխանատուները: Ես չունեմ ներքին ինֆորմացիա. եղե՞լ է հանդիպում քաղաքական իշխանության հետ, թե՞ որոշման ընդունումը թողնվել է տեսչության վրա, եթե թողնվել է տեսչության վրա, ապա ի՞նչ կարիք կար հապճեպ ազատել աշխատանքից տեսչական մարմնի ղեկավարին, որ պետք է որոշում ընդուներ:

- Եվ վերջին հարցը. նշենք, որ ամեն տարի, մասնավորապես 2015, 2016 թվականներին ստուգումներ անցկացվել են. որքանո՞վ եք ծանոթ այդ ստուգումների մանրամասներին, արդյո՞ք դրանք ձեւական բնույթ են կրել, որ շատ քիչ են տեւել 15 օր, իսկ ձերը՝ 4.5 ամիս: Արդյո՞ք այդ ժամանակ հայտնաբերված խախտումները փորձել եք շտկել, թե՞ ոչ:

- Կոռեկտ չէ այդ հարցին պատասխանելը, դա իմ գնահատելիքը չէ, ես մի բան կարող եմ ասել տեսչականի համատեքստում, այն պահից սկսած, երբ տեսչական մարմինն առանձնացվեց, նախկինում երկու տեսչություններ էին, մեկը էներգետիկայի, մյուսը՝ բնապահպանության նախարարության կազմում, ըստ էության, երկու քաղաքական մարմնի ստորաբաժանումներ էին, որոշումները կայացվել էին նախարարների կողմից: Կոռեկտ չէ, որ այսօրվա համատեքստում այս կտրվածքով գնահատական հնչեցնել նախկին ժամանակների ստուգումների մասին: Եվ իշխանությունն է այլ եղել, եւ տեսչական մարմինը լրիվ ուրիշ կազմակերպահրավական ձեւի մեջ է եղել, դրա համար ձեռնպահ կմնամ գնահատական հնչեցնել, միայն կարող եմ ասել, որ տեսչական մարմնում կան շատ բարեխիղճ աշխատակիցներ, ովքեր շատ պատվախնդրորեն եւ շատ պրոֆեսիոնալ աշխատում են: Քաջարանում իրականացրած ստուգումները տեսչության պատմության ընթացքում լավագույն ստուգումներն են եղել:

Վախճանվել է վիրաբույժ, Գորիսի պատվավոր քաղաքացի Հմայակ Գրիգորյանը

Վախճանվել է Գորիսի շրջանային հիվանդանոցի վիրաբուժական բաժինը չորս տասնամյակ ղեկավարած վաստակաշատ վիրաբույժ Հմայակ Գրիգորյանը:

Մի վառ ու անկրկնելի նկարագրով անձնավորություն էր նա: Կես դարից ավելի նրա անզուգական կերպարն իր պատվարժան տեղն էր զբաղեցրել Գորիս քաղաքի երեւելի անհատականությունների շարքում: Հմայակ Գրիգորյանի հուզական, մարդամոտ խառնվածքն ասես տրվել էր նրան՝ Գորիս քաղաքի ինքնատիպ հոգեկերտվածքի զտված խտացումների դրսեւորումները լավագույնս մարմնավորելու համար:

Վստահաբար կարող ենք ասել, որ տարբեր իրավիճակներում իր կրակոտ բնավորությանը բնորոշ անսեթեւեթ անմիջականությամբ նրա արտաբերած թեւավոր արտահայտությունները դեռ երկար տարիներ ուղեկցելու են դիպուկ հնչեցված խոսքի արժեքը գնահատող ու ըմբոշխնող բազում գորիսեցիների...

Հմայակ Աթայի Գրիգորյանը ծնվել է 1933 թ. ապրիլի 9-ին Գորիսի շրջանի Տեղ գյուղում, պետական ծառայողի ընտանիքում:

1951 թ. ավարտել է Տեղի միջնակարգ դպրոցը եւ նույն տարում ընդունվել Երեւանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը:

1957 թ. ավարտելով ինստիտուտը՝ գործուղվել է Գորիսի շրջանի Շուռնուխ գյուղ եւ աշխատել որպես ամբուլատոր բժիշկ: Մեկ տարի անց՝ 1958թ., Հմայակ Գրիգորյանը նշանակվել է Խնձորեսկի գյուղական բժշկական տեղամասի վարիչ, որտեղ երկու տարի աշխատելուց հետո տեղափոխվել է Ռ. Յոլյանի անվան Գորիսի շրջանային հիվանդանոց եւ անցել վիրաբուժական աշխատանքի:

1966 թ. Հմայակ Գրիգորյանն ընդունվել է Երեւանի բժշկական ինստիտուտի կլինիկական օրդինատուրա եւ երկու տարի ուսանել ընդհանուր վիրաբուժություն:

Օրդինատուրան ավարտելուց հետո՝ 1968 թ., նշանակվել է Գորիսի շրջանային հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի վարիչ եւ մինչեւ 2008թ. ղեկավարել այն:

Հիսնամյա վիրաբուժական գործունեության ընթացքում Հմայակ Գրիգորյանը հազարավոր վիրահատություններ է կատարել՝ փրկելով իր նշտարին ապավինած մարդկային բազում կյանքեր: Խորհրդային տարիներին՝ բարդ վիրահատական միջամտությունների կարիք ունեցող հիվանդների համար Հմայակ Գրիգորյանը, որպես բարձրակարգ վիրաբույժ, հաճախ է հրավիրվել հարեւան շրջաններ ու վիրահատություններ իրականացրել տեղի հիվանդանոցներում:

Ղարաբաղյան ազատամարտի տարիներին, երբ հազարավոր վիրավոր ազատամարտիկներ իրենց առաջին բուժօգնությունը ստանում էին Գորիսի հիվանդանոցի նրա ղեկավարած բաժանմունքում, առաջին հերթին



հենց նա էր ծանր վիճակի մեջ գտնվող վիրավոր ազատամարտիկներին վիրահատական միջամտությամբ կյանք պարգեւում: Անկանխատեսելի ռեժիմով զօր ու գիշեր մարդկային կյանքերի համար պայքարող իր ղեկավարած վիրաբուժական բաժանմունքին, այդ դաժան տարիներին, նա հաճախ էր, դառնացած հոգով, «դաշտային հոսպիտալ» անվանում...

Դարերի խորքերն արմատներ ձգող, բնիկ ժողովրդով բնակեցված Գորիսի նման քաղաքներում, որտեղ մարդիկ միմյանց «ազգ ու տակից» ու «յոթը պորտից» տեղեկացված են լինում, բժիշկ ու հատկապես վիրաբույժ լինելը՝ դյուրին առաքելություն չէ: Այդպիսի քաղաքներում չգրված մարդկային վարքաբանական նորմեր գոյություն ունեն, եւ օրվա ցանկացած ժամի, անկախ հոգնածությանդ աստիճանից, պիտի քո բժշկական օգնությունը հայցող մարդկանց հիվանդներին հենց նրանց օջախներում այցելելու պատրաստակամություն ցուցաբերես. ասել է թե՝ մարդկային սրտացավ պահվածք դրսեւորես:

Գորիսի տարածաշրջանում դժվար թե գտնվի մի մարդ, ով կկարողանա վերհիշել գոնե մեկ դեպք, որ Հմայակ Աթայիչը որեւէ հիվանդի այցելելու հարազատների խնդրանքը մերժած լինի: Ոչ միայն ու ոչ այնքան մասնագիտական կարողությունները, որքան հենց ուրիշի վշտին անմիջապես մարդկայնորեն արձագանքելու նրա այդ բարեհոգի էությունն է առանցքային դերակատարություն ունեցել, որ նա տասնամյակներ ի վեր հասարակության տարբեր խավերի հարգանքն ու սերն է վայելել:

Ժողովրդական պատկառանքով ու սիրով շրջանակված Հմայակ Գրիգորյանի նման մարդկային կերպարները շատ երկար են ժողովրդի հավաքական հիշողության մեջ ապրում:

Նա երբեք չդավաճանեց Հիպոկրատին տված երդմանը եւ մարդ արարածի Մարդ մնալու վսեմագույն կոչմանը:

Ցավակցում ենք Հմայակ Աթայիչի սիրելի կնոջը՝ Գրետա Մանվելյանին, զավակներին, հարազատներին եւ նրա մահը սգացող բոլոր մարդկանց:

Մի խումբ ընկերներ

Աշխատանքից ազատվել է Գորիս քաղաքի լավագույն նախակրթարանի լավագույն տնօրենը, իսկ պատճառների մասին՝ ոչ մի խոսք

Շատ տխրեցի տեղեկանալով, որ Գորիսի Վ.Սարգսյանի անվան թիվ 1 ՆՈՒՀ-ի տնօրեն Սաիդա Ադունցն ազատվել է աշխատանքից:

Չխորանալով պատճառների մեջ (տեղի՞, թե՞ անտեղի) պիտի փաստեմ, որ տիկին Սաիդայի տնօրինության ընթացքում ՆՈՒՀ-ը միշտ եղել է թիվ 1 առաջատարը քաղաքում:

Այդ մասին գիտեն ու կվկայեն բոլորը՝ անկախ քաղաքական հայացքներից:

Որպես հոռուստալրագրող, նախակրթարանում բարձր մակարդակով կազմակերպված բազմաթիվ միջոցառումների ականատեսն եմ եղել, որպես ՆՈՒՀ-ի ծնող հետեւել եմ ամենօրյա աշխատանքներին, արհեստավարժ թիմի կողմից իրականացվող վերահսկողությանն ու սպասարկմանը, հոգատարությանն ու պատասխանատվությանը: Ու այդ ամենը Սաիդա Ադունցի շնորհիվ:

29 տարվա մանկավարժական փորձը, իր գործի մեջ պրոֆեսիոնալիզմն ու պատասխանատվության մեծ զգացումը տվել են ցանկալի արդյունքը: Ու եթե աչքի տակով անցկացնեք, կնկատենք, որ հաջողություններ գրանցած երիտասարդ գորիսեցիներից շատերն այս նախակրթարանի սաներ են:

Ինչեւէ, հարգելի տիկին Սաիդա Ադունց, Դուք կարող եք հպարտությամբ քայլել Գորիսում, Ձեր

վաստակն է դա թույլ տալիս, բազում պարգեւատրումներն ու ոսկե մեդալները, Ձեր աշխատանքն ու ՆՈՒՀ-ի կերտած պատմությունն են դա թույլ տալիս:

Արեւ Աբելյան

Հյուր էր ճանաչված դաշնակահարուհին

Մայրաքաղաքի մշակութային կյանքին առնչվելու յուրատեսակ առիթ ու հնարավորություն են Կապանի արվեստի պետական քոլեջի փոխտնօրեն Աշոտ Խաչատրյանի նախաձեռնությամբ կազմակերպվող եւ անցկացվող համերգները: Այս անգամ «Գարուն» շարքի շրջանակում Կապանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում մենահամերգով հանդես եկավ միջազգային մրցույթի դափնեկիր, «Արամ Խաչատրյան» դաշնամուրային տրիոյի դաշնակահար, պրոֆեսոր, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը: Արմինե Գրիգորյանը ժամանակակից դաշնամուրային արվեստի ամենավառ ներկայացուցիչներից է, ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, այնուհետեւ ասպիրանտուրան՝ պրոֆեսորներ Գեորգի եւ Սերգեյ Սարաջյանների ղեկավարությամբ: Համերգային շրջագայություններով, որպես մենակատար, հանդես է եկել բազմաթիվ երկրներում, 2005-ից հանդես է գալիս որպես «Արամ Խաչատրյան» տրիոյի դաշնակահար: Համերգներով հանդես է եկել համաշխարհային տարբեր հեղինակավոր համերգասրահների բեմահարթակներում, այդ թվում՝ Վիեննայի, Համբուրգի, Լայպցիգի, Մյունխենի, Լոնդոնի, Տոկիոյի, Տորոնտոյի եւ այլն:

Ի տարբերություն Արամ Խաչատրյանի խոշոր կտավների՝ կոմպոզիտորի դաշնամուրային ստեղծագործությունները քիչ հայտնի են հանդիսականին: Այդ բացը լրացնելու նպատակով վերջին տարիներին Ա. Խաչատրյանի տուն-թանգարանը եւ «Արամ Խաչատրյան» տրիոն մեծ ուշադրություն են դարձնում կոմպոզիտորի դաշնամուրային, կամերային ստեղծագործությունների պրոպագանդմանը:

Այս համերգին դաշնակահարուհին մեծ վարպետությամբ կատարեց Արամ Խաչատրյանի «Սոնատը» (առաջին մաս), «Վալս կապրիսը» եւ «Պարը»: Համերգին հնչեցին նաեւ Շոպենի, Լիստի, Ռախմանինովի, Կոմիտաս-Սարաջյանի, Ա. Հարությունյանի ստեղծագործություններից: Համերգի ընթացքում Արմինե Գրիգորյանը ներկայացրեց «Արամ Խաչատրյան-դաշնամուրային ստեղծագործություններ» ձայնասկավառակը, որի մի օրինակը նվիրեց Կապանի Ա. Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցին: Համերգի ավարտին դաշնակահարուհին կատարեց Ա. Խաչատրյանի հանրահայտ «Տոկատտը»:

Վերջում Կապանի արվեստի պետական քոլեջի փոխտնօրեն Աշոտ Խաչատրյանը շնորհակալության խոսք ուղղեց դաշնակահարուհուն՝ համերգային սքանչելի երեկո պարգեւելու համար, համերգի հովանավոր Կապանի լեռնահարստացման կոմբինատի տնօրինությանը, համայնքապետարանին, Կապանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Լ. Վարդանյանին եւ աշխատակազմին՝ համերգի կայացմանը նպաստելու համար, համերգը վարող Թերեզա Գալստյանին:

- **Առաջին անգամ չէ, որ հանդես եմ գալիս այս քաղաքում, որտեղ ինձ սպասում է արվեստասեր ունկնդիրը, ես էլ գոհ եմ, որ Ա. Խաչատրյանն ինձ նման հնարավորություն ընձեռեց,**- «Սյունյաց երկրին» պարտադիր է:

նյաց երկրին» փոխանցեց Արմինե Գրիգորյանը:

2018-ը խաչատրյանական տարի էր, լրացավ կոմպոզիտորի ծննդյան 115-ամյակը: Հետաքրքրվեցինք Արմինե Գրիգորյանից, ով 2004թ.-ից ղեկավարում է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը, թե ինչ միջոցառումներ տեղի ունեցան հոբելյանի շրջանակում: Ա. Գրիգորյանի փոխանցմամբ՝ տարին հագեցած էր զանազան միջոցառումներով՝ համերգներ, փառատոներ, երեկոներ, իսկ հոկտեմբերին անցկացվեց միջազգային գիտական կոնֆերանս, տուն-թանգարանը հյուրընկալեց երաժշտագետներ, երաժիշտներ, կոմպոզիտորներ՝ 11 երկրից: Նրանց ելույթների հիման վրա պատրաստում են լույս ընծայել ժողովածու: Նորություններ եղան նաեւ տուն-թանգարանի ցուցադրությունում:

Մինչեւ համերգը՝ օրվա ընթացքում, օգտվելով պատեհ առիթից, Կապանի արվեստի քոլեջի տնօրինության նախաձեռնությամբ հանդիպում կազմակերպվեց կրթօջախի դասախոսների եւ ուսանողների մասնակցությամբ, որն անցավ անմիջական մթնոլորտում, դաշնակահարուհին բավարարեց ներկաների հարցասիրությանը եւ քոլեջին նվիրեց Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի մասին նյութեր եւ ձայնասկավառակ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կորել է

Կապանի ճարտարագիտատնտեսագիտական տեխնիկումի 1995թ. շրջանավարտ Մարգարիտ Վարդգեսի Ղազարյանի N005646 դիպլոմը, գրանցման N85:

Համարել անվավեր:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1150, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 26.03.2019թ.: